ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2018-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 4

1.1. Պատմական համառոտ տեղեկանք *4*

1.2. Աշխարհագրական դիրքը *5*

1.3. Ժողովրդագրություն *6*

1.4. Վանաձոր համայնքում 2013-2017թթ. ծնունդների, մահվան, ամուսնության, ամուսնալուծության մասին տվյալներ՝ ըստ ՔԿԱԳ-ի *6*

2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ 8

2.1 Վանաձոր համայնքի ավագանին ըստ կուսակցությունների՝ *9*

2.2. Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը *9*

3. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ 10

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ .. 11

5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ .....

ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ 12

5.1. Ճարտարապետություն և քաղաքաշինություն *12*

5.2. Համայնքի հողային ֆոնդերը և դրանց նկարագրությունը *14*

6. ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 15

6.1. Վանաձոր քաղաքի կոմունալ ունեցվածքը *15*

6.2. Վանաձոր համայնքի ենթակայության գերեզմանատներ *15*

7. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 16

8.ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 18

8.1. Բնության և շրջակա բնական միջավայրի հիմնախնդիրների հայեցակարգ *18*

8.2 Անտառնտեսություն *19*

8.3. Բուսական և կենդանական աշխարհ *19*

8.4. Անտառների կառուցվածքը *21*

9. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 22

10. ՏՐԱՆՍՊՈՐՏ 23

11. ՄՇԱԿՈՒՅԹ 24

11.1. Մշակութային հիմնարկներ համայնքային ենթակայության/ *26*

12. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 30

12.1. Նախադպրոցական կրթություն 30
12.2. Դպրոցներ 33
12.3. Քոլեջներ ուսումնարաններ 34
12.4. Համալսարաններ 34
13. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ 35
13.1. Ֆիզիկական կուլտուրա եվ սպորտ 35
13.2 Մարզադպրոցների վերաբերյալ տվյալներ 36
13.3 Համայնքը սպասարկող առողջապահական ընկերություններ 38
14. ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 40
15. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 42
16.ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 45
17. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 45
18. ԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏ 47
19.ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 47
20. ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ 48
21. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ 48
22. ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ 50
23.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 53
24.ՀԱՄԱՅՆՔԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 62
25.ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 64
26.ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 64
27. 2018-2021թթ. ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ 68

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1. Պատմական համառոտ տեղեկանք

Տաշիր-Ձորագետի շրջանը և հատկապես Վանաձոր քաղաքի տարածքը հարուստ են մեծ ու փոքր հնագիտական հուշարձաններով («Թագավորանիստ», «Մաշտոցի բլուր», «Քոսի ճոթեր»), բրոնզե դարի և վաղ երկաթի դարաշրջանի (մ.թ.ա. III հազարամյակ) դամբարաններով: Այստեղ ծաղկում է ապրել խեցեգործությունը, զարգացել է մետաղագործությունը:

Բնակավայրի մասին միջնադարից մեզ հասած շատ տեղեկություններ չեն պահպանվել: Միակ հետքը Վանաձորի կիրճում գտնվող Պապանի գյուղն է:

Գուգարքի հետ միասին՝ Վանաձորի տարածքում գտնվող բնակավայրը մ.թ.ա. II դարում եղել է Մեծ Հայքի, իսկ մ.թ. X դարում՝ Կյուրիկյան թագավորության կազմի մեջ: Ենթադրվում է, որ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը թաթարական է, տրվել է XIII դարի սկզբներին Վանաձորի հյուսիսային բլրի վրա գտնվող սև քարից կառուցված եկեղեցու անունով:

1801թ. Վրաստանի հետ Ռուսաստանին է անցնում նաև Լոռին, և Ղարաքիլիսան դառնում է սահմանային զորակայան: 1849 թվականից Ղարաքիլիսան Երևանի նահանգի մեջ էր: 1870 թվականից Դիլիջան-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ճանապարհի, իսկ 1899 թվականից Թիֆլիս-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ երկաթուղու, կայարանի, փոստատան և իջևանատների կառուցումը նպաստեց գյուղաքաղաքի ձևավորմանն ու զարգացմանը:

1812թ. եվրոպացի ճանապարհորդներ Ջեյմս Մորիերը և Ռոբերտ Հերփորթը տեսել են փայտե, հողածածկ տներով մի խղճուկ գյուղակ: Իսկ 1829թ. Ղարաքիլիսա եկած Խաչատուր Աբովյանը վկայում է, որ այստեղ հազիվ 500-600 բնակիչ կար, որոնք գաղթել էին Երևանից: Հետագայում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, Ղարաքիլիսայում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանի Կարս, Արդահան, Բայազետ, Էրզրում քաղաքներից գաղթած մի քանի հարյուր հայ ընտանիքներ:

Վանաձորը քաղաքային բնակավայր է 1924 թվականից: 1929-1930 թվականներին կազմվել է Ղարաքիլիսայի (հետագայում՝ Կիրովական, այնուհետև Վանաձոր) առաջին հատակագիծը (ճարտարապետներ՝ Կարո Հալաբյան, Միքայել Մազմանյան, Գևորգ Քոչար), որով նախատեսում էր քաղաքի տարածքն ընդլայնել արևմտյան և արևելյան ուղղություններով՝ Դիմաց թաղամասում: Մինչև 1935 թվականը կոչվել է Ղարաքիլիսա: 1935 թվականի հունվարին Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշում է հեղափոխական Սերգեյ Միրոնովիչ Կիրովի հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքը վերանվանել Կիրովական: 1939 թվականին գլխավոր հատակագծով (ճարտարապետներ՝ Ն.Զարգարյան, Ա.Մինասյան) որոշակի է դարձել քաղաքի կերպարը՝ զարգացման նշանակալից հեռանկարներով (արդյունաբերական կենտրոն և ամառանոցային վայր): 1949 թվականին կազմվել է նոր գլխավոր հատակագիծ (ճարտարապետներ՝ Հ.Դավթյան, Ռ.Գրիգորյան): 1950-ական թվականներին

կառուցապատվել է Կիրովի անվան (այժմ՝ Հայքի) հրապարակը՝ քաղաքի վարչակառավարչական կենտրոնը:

19-րդ դարում քաղաքում եղել է երկու եկեղեցի՝ կառուցված 1831 թվականին (1828 թվականի երկրաշարժից քանդված հին եկեղեցու տեղում) և 1895 թվականին (ռուսական եկեղեցին):1978 թվականին քաղաքում գործել են արդյունաբերական 27 ձեռնարկություններ: Այդ ժամանակաշրջանի արդյունաբերության առաջատարը Ալեքսանդր Մյասնիկյանի անվան քիմիական գործարանն էր:Ժամանակին քաղաքի խոշոր ձեռնարկություններից են եղել քիմիական մանրաթելերի, ճշգրիտ հաստոցների, «Ավտոգենմաշ», «Ավտոմատիկա» գործարանները, տրիկոտաժի, կահույքի, կարի արտադրական միավորումները: «Պոլիմերսոսինձ» գիտաարտադրական միավորումն իր բնագավառի առաջատար գիտական կենտրոններից էր: Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս մեծ համբավ են ունեցել այն ժամանակ Կիրովականի կահույքի, մորթու-մուշտակի, կարի ֆաբրիկաները, «Լոռի» հանքային ջրերի գործարանն ու թեթև արդյունաբերության այլ ձեռնարկություններ:

Նախախորհրդային շրջանում այստեղ գործել են եկեղեցական, ծխական (հիմնվել է 1853 թվականին), օրիորդաց (1879), պետական երկդասյա ռուսական (1897) և ռուս պաշտոնյաների երեխաների (1908) դպրոցներ:

1992թ. քաղաքը կոչվում է Վանաձոր: Այն Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաքն է (80000 բնակչություն՝ 2017թ., իսկ 1988 թ.-ին՝ 178000), Լոռու մարզկենտրոնը:

Այսօր քաղաքը մեծամասամբ հաղթահարել է 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքները և թևակոխել է զարգացման նոր փուլ: Այժմ քաղաքը զարգացման երկրորդ շունչն է առնում: Վանաձորում գործում են 6 բուհ, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, 10 մարզադպրոց, ընդհանուր առմամբ 19 մշակութային հիմնարկներ՝ երաժշտական դպրոցներ, արվեստի դպրոցներ, երգչախմբեր, մշակույթի տներ, թատրոններ, թեթև արդյունաբերական ձեռնարկություններ և այլն:

1.2. Աշխարհագրական դիրքը

Լոռու մարզկենտրոն Վանաձորը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում: Զբաղեցնում է 2599.33 հեկտար մակերես՝ Փամբակի և Բազումի լեռների հովտում:

Հեռավորությունը Երևանից ավտոմոբիլային ճանապարհով 125 կմ է, երկաթգծով՝ 224 կմ: Ծովի մակերևույթից բարձր է 1353մ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Կլիման մեղմ է: Հունվարի միջին ջերմաստիճանը –4,2°C է, հուլիսինը՝ +19,7°C, նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է -32°C, առավելագույնը՝ +36°C: Միջին ամսական տեղումները՝ 551մմ: Վանաձորը տարածքային վարչական կենտրոն է, տրանսպորտային հանգույց՝ այստեղով են անցնում Երևան–Թբիլիսի երկաթգիծը, ինչպես նաև միջպետական կարևորագույն ավտոճանապարհներ:

1.3. Ժողովրդագրություն

1. Վանաձոր քաղաքի մշտական բնակչությունը առ հոկտեմբեր, 2017թ.՝ ըստ ԱՎԾ-ի



1.4. Վանաձոր համայնքում 2013-2017թթ. ծնունդների, մահվան, ամուսնության, ամուսնալուծության մասին տվյալներ՝ ըստ ՔԿԱԳ-ի

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժինը համայնքի ղեկավարի պատվիրակված լիազորությունների շրջանակներում սպասարկում է Վանաձոր քաղաքի և հարակից գյուղերի բնակչությանը:

Բաժնի ռազմավարությունն ուղղված է քաղաքացիների ու պետական մարմինների սպասարկման և ծառայությունների մատուցման արդյունավետ կազմակերպմանը և ցանկալի որակի ապահովմանը: Կարևորվում է բաժնի շենքային և աշխատանքային պայմանների և գույքի արդիականացումը՝ հանդիսավոր պայմաններում ամուսնությունների գրանցումը:


Ծնունդներ. 2013-2017թթ.
1400
1200
1000
800
600
400
200
0
1100
1219
987
881
931
2013թ.
2014թ.
2015թ.
2016թ.
2017թ.


Մահ. 2013-2017թթ.
1400
1200
1000
800
600
400
200
0
1024
1346
1042
849
960
2013թ.
2014թ.
2015թ.
2016թ.
2017թ.


Ամուսնություն. 2013-2017թթ.
900
800
700
600
500
400
300
200
100
0
715
807
604
482
296
2013թ.
2014թ.
2015թ.
2016թ.
2017թ.



1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման սահմանադրական հիմքերը Հայաստանի ժողովուրդն ամրագրել է 1995թ. հանրաքվեի արդյունքում: Երկրի վարչատարածքային բաժանման նոր համակարգի հաստատմամբ, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» (1996թ.) ՀՀ օրենքի ընդունմամբ սկսվեց իշխանության ապակենտրոնացումը և տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման իրականացումը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, որի 9-րդ գլխի 179-190-րդ հոդվածներն ուղղակիորեն սահմանում են տեղական ինքնակառավարման հարցերը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, որը հիմնվում է Տեղական Ինքնակառավարման մասին Եվրոպական Խարտիայի վրա, այլ օրենքներով եւ իրավական ակտերով:

Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ եւ օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու եւ համայնքի սեփականությունը տնօրինելու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքը եւ համայնքի կարողությունն է:

ՏԻՄ-երի կարողությունների շարունակական ավելացումն ու ամրապնդումը համայնքների զարգացման կարեւորագույն նախապայմաններից է:

Տեղական ինքնակառավառման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:

Համայնքի ավագանին կազմավորվել է 2016թ. հոկտեմբերի 2-ի ընտրությունների արդյունքում: 2016թ. հոկտեմբերի 10-ին ընտրվել է Վանաձոր համայնքի ղեկավար:

2.1 Վանաձոր համայնքի ավագանին ըստ կուսակցությունների՝

Կուսակցություն		Անդամների թիվը
Հայաստանի Հանրապետական կուսակցություն		13
Լուսավոր Հայաստան կուսակցություն		10
Հայկական վերածնունդ կուսակցություն		5
Բարգավաճ Հայաստան կուսակցություն		3
Հայ Յեղափոխական Դաշնակցություն		2

2.2. Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը

Կառուցվածքային ստորաբաժանումներ

- Ֆինանսական բաժին
- Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժին
- Առևտրի և տրանսպորտը համակարգող բաժին
- Իրավաբանական բաժին
- Ճարտարապետության և քաղաքաշինության բաժին
- Կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժին
- Բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժին
- Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժին
- Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժին
- Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
- Հանրային կապերի, լրատվության և արարողակարգի բաժին
- Քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժին
- Ներքին աուդիտի բաժին

Առանձնացված ստորաբաժանումներ

- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային բաժին
- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժին:

3. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունն ուղղակի (մասնակցային) ժողովրդավարության հիմնարար սկզբունքն է, որի նպատակն է բարձրացնել համայնքապետարանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը՝ համայնքի բնակիչներին հնարավորություն տալով առավել ակտիվորեն մասնակցելու համայնքի կառավարմանը:

Համայնքապետարանում ներդրված «Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգը» (ՀԿՏՀ) հնարավորություն է տալիս ավտոմատացնել և արագացնել տեղական ինքնակառավարման աշխատատար բազմաթիվ գործընթացներ և ապահովել գույքահարկի և հողի հարկի բազաների, համայնքի բյուջեի, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, իրադարձությունների, նորությունների հասանելիություն:

2018-2021 թվականներին համայնքապետարանի կողմից տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հնարավորությունների ընդլայնման, կառավարման համակարգի բարեփոխումների և նոր մեխանիզմների ներդրման նպատակով անհրաժեշտ է՝

- Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով համայնքապետարանում 2017թ. ներդրված քաղաքացիների սպասարկման աշխատասենյակի և «Մեկ պատուհան» համակարգի գործունեության բարելավում, օգտագործելով ՀԿՏՀ-ի ռեսուրսները,
- Հաղորդակցության ժամանակակից միջոցների կիրառում և բնակչի հետ հետադարձ կապի ակտիվացում՝ ապահովելով վերջինիս լիարժեք մասնակցությունը համայնքային խնդիրների լուծման գործընթացում,
- Համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով համայնքապետարանում համայնքի ղեկավարի կողմից պարբերաբար բնակչության ընդունելության կազմակերպում,
- www.vanadzor.am պաշտոնական կայքի էջի և ՀԿՏՀ-ի հասանելիության ապահովում, ինչը հնարավորություն կտա առցանց երկխոսության՝ ՏԻՄ-ի և քաղաքացիների միջև,
- Բնակչության հետ համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների և ավագանու անդամների հանդիպումների կազմակերպում,
- Կարևորագույն նշանակություն ունեցող հարցերի լուծման նպատակով հանրային քննարկումների կազմակերպում, հանրության առանձին սեգմենտների հետ (մտավորականներ, ՀԿ-եր, երիտասարդներ, հոգևոր աշխարհի ներկայացուցիչներ, հնաբնակներ և այլն),

- Տեղեկատվական ցուցատախտակների տեղադրում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

h/h	**Անվանումը**	**Չափմ միավ.**	**Քանակը**	**Հասցե**	**Շենքային պայմաններ**
1	Տարոն 1-3 թաղամասերի անավարտ կառույցներ	հատ	177	Տարոն 1-3	Կիսակառույց
2	Տարոն–4 թաղամասի անավարտ կառույցներ	հատ	40	Տարոն 4	կիսակառույց
3	Ճոպանուղի	հատ	1	Խանդակ	Ենթակա է նորոգման
4	Արհեստական լիճ	հատ	1	Զոր. Անդրանիկի փ.	Ենթակա է նորոգման
5	Ֆուտբոլի փոքր դաշտ	հատ	1	Տիգրան Մեծի 42ա	Ենթակա է նորոգման
6	Մանկատուն	հատ	1	Տարոն 4	Վերանորոգված
7	Սելավատար	հատ	1	Խնձորուտ	Ենթակա է նորոգման
8	Համայնքապետարանի շենք	հատ	1	Տիգրան Մեծի 22	Ենթակա է մասնակի նորոգման
9	«Նեցուկ» ՀՈԱԿ	հատ	1	Թատերական 6/2	Քարաշեն, վերանորոգման ենթակա
10	«Օլիմպիական հերթափոխի ՄՄՄ» ՀՈԱԿ	հատ	1	Աղայան 72/1	Քարաշեն,վերանորոգված
11	«Ծանրամարտի ՄՄՄ» ՀՈԱԿ	հատ	1	Զոր. Անդրանիկի 8ա	Փայտե շինություն, վերակառուցման ենթակա
12	«Շախմատի ՄՄՄ» ՀՈԱԿ	հատ	1	Տիգրան Մեծի 2բ	Քարաշեն, նորակառույց
13	«Մենապայքարային ՄՄՄ» ՀՈԱԿ	հատ	1	Սուխումի 5	Քարաշեն, մասնակի վերանորոգված
14	«Աթլետիկայի ՕՀՄՄՄ» ՀՈԱԿ	հատ	1	Զոր. Անդրանիկի 8բ	Քարաշեն, ենթակա է նորոգման
15	«Ֆուտբոլի ՄՄՄ» ՀՈԱԿ	հատ	1	Հակոբյան 1ա	Փայտե հին կառույց, ենթակա է վերակառուցման
16	«Ա.Ազարյանի անվան Կենտրոն» համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Մխ. Հերացու 41	Քարաշեն, վերանորոգված
17	«Տարոն» համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Տարոն-4, Բել .42գ	Քարաշեն
18	«Լողի ՄՄՄ» ՀՈԱԿ	հատ	1	Մխ.Հերացու 24	Նորակառույց
19	«Ձմեռային մարզաձևերի ՄՄՄ» ՀՈԱԿ	հատ	1	Հակոբյան 1ա	Քարաշեն, վերանորոգված
20	«Ֆ.Նանսենի անվան թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Մյասնիկյան 28	Քարաշեն, վերանորոգված
21	«Թիվ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Շիրակի խճ. 64	Տնակային
22	«Թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Սայաթ-Նովա 18	Տնակային
23	«Թիվ 5 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Մաշտոցի 14	Քարե շենք, տիպային
24	«Թիվ 7 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Նարեկացու 47	Քարե շենք, հարմարեցված
25	«Թիվ 8 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Գորկու 9ա	Տնակային
26	«Թիվ 10 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Չուխաջյան 12	Քարե շենք, տիպային
27	«Թիվ 11ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Չուխաջյան 18ա	Քարե շենք, տիպային
28	«Թիվ 15 Ս.Մարիամ Աստվածածին ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Նալբանդյան 1/3	Քարե շենք, տիպային
29	«Մ. Մատինյանի անվան թիվ19ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Սուխումի 5	Քարե շենք, տիպային
30	«Թիվ 24 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Լազյան 32	Քարե շենք, տիպային
31	«Թիվ 28 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Աբեղյան 46ա	Քարե շենք, տիպային
32	«Թիվ 30 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Շինարարների 91	Քարե շենք, տիպային

33	«Թիվ 31 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Ներսիսյան թաղ. 6	Քարե շենք, տիպային
34	«Թիվ 32 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Տարոն - 4	Քարե շենք, տիպային
35	«Թիվ 33 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Տարոն – 3 ՔՇՀ-7	Քարե շենք, տիպային
36	«Թիվ 34 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Տարոն – 3 ՔՇՀ-7	Քարե շենք, տիպային
37	«Թիվ 35 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Տարոն - 4	Քարե շենք, տիպային
38	«Թիվ 40 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Տարոն – 2, ՔՇՀ-3	Քարե շենք, տիպային
39	«Թիվ 41 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	հատ	1	Շիրակացու 17ա	Քարե շենք, տիպային
40	«Էդ.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Վարդանանց 41	Քարե շենք, վերակառուցված
41	«Շարա Տալյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Վարդանանց 41	Քարե շենք, վերակառուցված
42	«Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Աղայան 86ա	Քարե շենք, վերանորոգված
43	«Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Ներսիսյան 13	Վերանորոգման ենթակա
44	«Կոմիտասի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Բաղրամյան 15/1	Նորակառույց
45	«Ստ. Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Մոսկովյան 30	Վերանորոգման ենթակա
46	«Պարարվեստի դպրոց» ՀՈԱԿ	հատ	1	Վարդանանց 41	Քարե շենք, վերակառուցված
47	«Թիվ 1 մշակույթի տուն» ՀՈԱԿ	հատ	1	Նարեկացու 43	Վերանորոգման ենթակա
48	«Թիվ 2 մշակույթի տուն» ՀՈԱԿ	հատ	1	Ուսանողական 6	Վերանորոգման ենթակա
49	«Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տուն» ՀՈԱԿ	հատ	1	Զոր. Անդրանիկի 38	Վերանորոգված
50	«Հ. Մաթևոսյանի անվ. գրա-դարանների կենտրոնացված համակարգ ՀՈԱԿ	հատ	1	Թատերական 2 Երևանյան խճ. 99/26 Չուխաջյան 30/17 Նարեկացու 47 Ուսանողական 6	Վերանորոգման ենթակա
51	«Ստ. Զորյանի տուն-թանգա-րան ՀՈԱԿ	հատ	1	Ստ. Զորյանի 24	Վերանորոգված
52	«Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ	հատ	1	Տիգրան Մեծի 58	Վերանորոգման ենթակա
53	«Գր. Հախինյանի անվան «Հորովել» ժող. երգի-պարի համույթ» ՀՈԱԿ	հատ	1	Տիգրան Մեծի 2	Վերանորոգված
54	Լոռի մարզական ակումբ	հատ	1	Վարդանանց 6	Վերանորոգման ենթակա
55	Հանրակացարան	հատ	1	Ուսանողական 14	Վերանորոգման ենթակա

5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

5.1. Ճարտարապետություն և քաղաքաշինություն

Վանաձոր համայնքի քաղաքաշինության, ճարտարապետության և հողօգտագործման բնագավառում տարվող քաղաքականության հիմքը համայնքի գործող գլխավոր հատակագիծն է, որը հաստատվել է 2014թ. ավագանու որոշմամբ: 1988թ.-ի երկրաշարժից Վանաձորում ավերվեցին բնակելի թաղամասեր, արտադրական, մշակութային, կենցաղսպասարկման կառույցներ: ԽՍՀՄ փլուզման և հանրապետության

շրջափակման հետևանքով արդյունաբերական ձեռնարկությունների գերակշռող մասը մասամբ կամ ամբողջովին դադարեց գործել:

Երկրաշարժի պատճառած վնասները վերացնելու համար 1989թ.-ին մշակվում է աղետի վերացման գլխավոր հատակագիծ, որը սակայն ամբողջովին չլուծեց համայնքի քաղաքաշինական խնդիրները: Այդ տարիներին մեծ թափ ստացած ինքնակամ շինարարություններն աղճատեցին համայնքի քաղաքաշինական ու ճարտարապետական նկարագիրը: Ֆինանսական սուղ միջոցներով հնարավոր չէր պահպանել կամ վերակառուցել Վանաձորի համար մեծ նշանակություն ունեցող քաղաքաշինական ու ճարտարապետական և այլ կառույցներ, ԽՍՀՄ տարիներին կառուցված բոլոր կամուրջները, բազմաթիվ հենապատեր ու պատվարներ, 84 բազմաբնակարն շենքեր, որոնք կարիք ունեն ուժեղացման և ամրացման: Առկա են բազմաթիվ այլ խնդիրներ:

2014թ. Վանաձորի ավագանու որոշմամբ հաստատվեց համայնքի նոր լրամշակված գլխավոր հատակագիծը, սակայն որոշ թաղամասեր առայժմ չունեն մանրամասն գոտևորման նախագիծ: Անհրաժեշտ է մշակել համայնքի քաղաքաշինական կանոնադրություն, որը ոլորտի այլ նորմատիվատեխնիական փաստաթղթերի հետ կդառնա հիմնական ուղեցույց քաղաքաշինական, ճարտարապետական ու հողօգտագործման բնագավառներում տարվող քաղաքականության համար:

2018-2021թթ. քաղաքաշինության ոլորտում որպես զարգացման ռազմավարություն առաջնային են՝

- «Լոռի» մարզադաշտի վերակառուցում և վերականգնում,
- Համայնքի 9 հրապարակների բարեկարգում՝ 4.72 հա ընդհանուր մակերեսով,
- Գլխավոր հատակագծին համահունչ՝ մի շարք թաղամասերի համար գոտեվորման նախագծերի պատվիրում՝ 1000 հա ընդհանուր մակերեսով,
- «Մայմեխ» ճոպանուղու վերագործարկում,
- Համերգասրահի կառուցում /2500 տեղ/,
- Զբոսայգիների բարեկարգում և արդիականացում,
- Տարոն թաղամասում նոր զբոսայգու կառուցում /14.84 հա/,
- Կամուրջների ուժեղացում և վերականգնում,
- Կենտրոնական և փոքր հրապարակների բարեկարգում, դրանցում հուշարձանների տեղադրում
- Անձրևաջրատար համակարգի կառուցում (100կմ երկարությամբ),
- Վթարային հենապատերի վերականգնում,
- Համայնքային ենթակայության՝ տնակային պայմաններում գործող կրթական, մարզականն ու մշակութային օբյեկտների ապահովում շենքային պայմաններով,
- Ինքնակամ կառույցների օրինականացում, օրենսդրությանն ու քաղաքաշինական նորմերին չհամապատասխանելու դեպքում՝ դրանց ապամոնտաժում,
- Ներդրումների ներգրավմամբ առևտրային բարեկարգ տարածքների կառուցում (8000 մ^2 մակերեսով),
- Ճարտարապետական փոքր ձևերի, արձանների, հուշատախտակների տեղադրում,

- 3-րդ մասի գերեզմանատուն տանող 2-րդ ճանապարհի կառուցում, գերեզմանատան ներքին ճանապարհային ցանցի նորգում ու կարգավորում՝ 48հա ընդհանուր մակերեսով,
- Բնակֆոնդի ամրացման ենթակա շենքերի վերականգնում սեյսմազինվածության բարձրացում՝ (16650մ²),
- Հանրային զուգարանների կառուցում,
- Քաղաքային լճի և քիմգործարանի լճերի կասկադի տարածքի բարեկարգում,
- Վանաձոր գետի կիրճի բարեկարգում:

5.2. Համայնքի հողային ֆոնդերը և դրանց նկարագրությունը

Համայնքի հողային տարածքը պատկանում է հրաբխային բարձրավանդակի հողային գոտուն: Տարածված են անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են չափավոր տաք կլիմայի պայմաններում, կաղնու անտառատեսակների տակ:

Վանաձորի շրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ անտառային միջին հումուսային կրազերծված սևահողեր, որոնք իրենցից ներկայացնում են լեռնային սևահողերի ենթատիպը: Հումուսի պարունակությունը բավարար է՝ 10-14%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար, 0-100սմ խորության վրա դրանք կազմում են 360տ/հա:

Ռեակցիան հողային կտրվածքի բոլոր հորիզոններում մոտ է չեզոքին (PH=6-7): Հանքաբանական կազմում գերակշռում են թեթև և միջին շրջանի միներալներ:

Համայնքի վարչական տարածքը,	2599.33 հա
այդ թվում՝	
▪ բազմաբնակարան շենքերի պահպանման և սպասարկման հողամասեր	1072.14-563.30=508.84 հա
▪ արտադրական նշանակության հողեր	294.4 հա
▪ գյուղատնտեսական նշանակության հողեր	3.26 հա
▪ գերատեսչական հիմնարկների զբաղեցրած հողեր	74.08 հա
▪ հանգստի գոտիներ	30.46 հա
▪ հատուկ պահպանվող տարածքների հողեր	109.18 հա
▪ ջրային ֆոնդեր	59.17 հա
Բնակավայր (եր) ի տարածքը	1907.06 հա
Համայնքի սեփականություն համարվող հողերը	1552.26 հա
Օտարված և օգտագործման (անհատույց, վարձակալության) տրամադրված հողերը	0.96+15.41=16.37 հա

6. ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Զարգացման ծրագրով նախատեսվում է բարեկարգել ներհամայնքային ճանապարհները և մայթերը, լուսավորել պատմամշակութային արժեք հանդիսացող շենք–շինությունների շրջակայքը և ծայրամասային թաղամասերը, ավելացնել ծաղկանոցների տարածքները, կանաչապատել տարածքին բնորոշ ծառատեսակներով: Նախատեսվում է նաև աստիճանաբար անցնել լուսավորության էներգախնայող համակարգի, իրականացնել բարձրորակ կենցաղային աղբահանություն, բարեկարգել աղբարկղերի տեղադրման համար նախատեսված տարածքները, իրականացնել սանիտարական մաքրում և ձմեռային պաշտպանություն, վերանորոգել և սպասարկել անձրևաջրահեռացման համակարգը, իրականացնել գետերի հուների մաքրման աշխատանքները, կազմակերպել թափառող կենդանիների վնասազերծումը: Նախատեսվում են փողոցների նշագծման աշխատանքներ բարձրորակ ներկանյութերով, ճանապարհային նշանների և լուսաֆորային օբյեկտների արդիականացման և սպասարկման աշխատանքներ:

Նախատեսվում է մշակել շենքերի արտաքին լուսավորության համակարգ:

Ծրագրի խնդիրներն են՝ Վանաձոր համայնքի փողոցների մաշվածությունը, լուսավորության ներկայիս համակարգի պահպանման մեծ ծախսերը, աղբահանությունն իրականացնող կազմակերպությունների մեքենա-մեխանիզմների ֆիզիկական մաշվածությունը, բազմաբնակարան շենքերի աղբամուղների վատթար վիճակը, անձրևաջրահեռացման համակարգի մաշվածությունը, բնակչության՝ շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ ունեցած գիտելիքների ցածր մակարդակը:

6.1. Վանաձոր քաղաքի կոմունալ ունեցվածքը

Վանաձոր համայնքի ճանապարհային ծածկույթի մակերեսը	1246885 մ^2
որից ասֆալտբետոնե ծածկույթի մակերեսը	1207195 մ^2
համայնքի ճանապահների և փողոցների գումարային երկարությունը	185կմ
Համայնքին պատկանող գիշերային լուսավորության հենասյուների վրա առկա լամպերի քանակը	3041 հատ
չլուսավորված հենասյուների քանակը	583 հատ
ՀԷՑ-ին պատկանող հենասյուների վրա տեղադրված /համայնքին պատկանող/ լամպերի քանակը	1178 հատ

6.2. Վանաձոր համայնքի ենթակայության գերեզմանատներ

Անվանում	Հասցե	Տարածք
թիվ 1 գերեզմանատուն	Լոռվա խճ., մասնակի փակ	51.35 հա
թիվ 2 գերեզմանատուն	Նարեկացի փող. բաց	52 հա
թիվ 3 գերեզմանատուն	Տարոն-4 թաղ. մասնակի փակ	3.87հա
թիվ 4 գերեզմանատուն	Խնձորուտ թաղ. մասնակի փակ	5.76 հա

Համայնքային ենթակայության տրանսպորտային կամուրջների, հրապարակների այգիների, փողոցների ցանկը, ըստ հավելված 1-ի:

7. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի կայուն զարգացումն ապահովելու համար համատիրությունների և բնակարանային տնտեսության ոլորտի ռազմավարությունն ուղղված է քաղաքաշինության զարգացմանը և բնակֆոնդի ճիշտ շահագործմանն ու պահպանմանը: Այս գերակայությունը ենթադրում է առկա բնակֆոնդի կապիտալ, ընթացիկ նորոգում, սեյսմակայուն նոր ճարտարապետական լուծումների մշակում և իրականացում, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների հիմնանորոգում և վերականգնում:

Ոլորտի գերակայություններից են նաև համայնքի բնապահպանական հիմնախնդիրների լուծումը և ժամանցային ու հանգստյան գոտիների կառուցումը: Դա ենթադրում է բազմաբնակարան շենքերի բակերի մերձբակային տարածքների կանաչապատում, համայնքում կանաչ հատվածների, խաղահրապարակների և հանգստյան գոտիների ավելացում, շրջակա միջավայրի պահպանություն, բակերի բարեկարգում ու ասֆալտապատում:

Ոլորտի գործառույթներից մեկն էլ ուղղված է համայնքի բազմաբնակարան շենքերի կառավարաման մարմինների՝ համատիրությունների գործունեության վերահսկմանը և նրանց կողմից իրականացվող աշխատանքների համակարգմանը: Իսկ բնակարանային ֆոնդի հաշվառման և բաշխման գործառույթն ուղղված է բնակարանային ֆոնդի համակողմանի հաշվառման, համայնքային ենթակայության բնակարանների օտարման կարգով հաշվառման, զոհված և վիրավոր ազատամարտիկների կարիքավոր ընտանիքների հաշվառման և այլ լիազորությունների կատարմանը:

2018-2021թթ. զարգացման ծրագրի շրջանակներում ոլորտի գործունեությունը համայնքում մի շարք կարևոր նշանակության խնդիրների լուծման ու կարգավորման շեշտադրում և նպատակներ ունի:

Վանաձոր համայնքի բնակչության բարեկեցության բարելավումը պարտադրում է գտնել բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման, բարձրահարկ շենքերի վերելակների վերագործարկման, խաղահրապարակների, մերձբակային տարածքներում հանգստյան գոտիների կառուցման, բարեկարգ բակեր ունենալուն ուղղված ծրագրերը հովանավորող դոնոր կազմակերպություններ, ինպես նաև ապավինել ՀՀ կառավարության աջակցությանը:

Վանաձոր համայնքի մերձբակային տարածքներում հանգստյան գոտիների և ժամանակակից խաղային սարքավորումներով զինված խաղահրապարակների կառուցման ծրագրի միջոցով, հատկապես երեխաների պարագայում կարելի է նպաստել առողջ ապրելակերպի և սպորտի զարգացմանը, մեծացնել նրանց հետաքրքրությունների շրջանակը՝ առօրյան դարձնելով ավելի հագեցած և լիարժեք՝ զերծ պահելով վատ սովորություններից և միջավայրից:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառին, որը հնարավորություն կտա համայնք-համատիրություն-բնակիչ կապն ավելի սերտ դարձնել:

Բնակարանային տնտեսության հիմնական գործառույթներից է քաղաքի տարածքը ժամանակավոր կացարաններից ազատելը և բնակիչների համար բարեկեցիկ պայմաններ ստեղծելը: Թվով 11 տնակային ավաններում և ավաններից դուրս բնակվում են ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած շուրջ 757 ընտանիքներ: Բացի այդ, Բուլղարական 2 տնակային ավաններում բնակվում են թվով 221 ընտանիքներ, որոնց խնդիրն է տնակների սեփականաշնորհումը:

Տնակային ավանների բնակիչներին բնակարանային պայմաններով ապահովելու համար 2018-2021թթ. նախատեսվում է.

- «Առդա», «Ֆուլեր» կազմակերպությունների և համայնքապետարանի միջոցներով կիսակառույց շենքերի հիմքերի վրա բնակարանների կառուցում,
- Ամրացման ենթակա շենքերի ամրացումից հետո համայնքային սեփականություն հանդիսացող ազատ բնակարանների հատկացում,
- Որպես հանրակացարան ևս մեկ շենքի վերակառուցում և սենյակների հատկացում տնակային ավանի բնակիչներին,
- Սոցիալական բնակարանաշինություն:

Համայնքի բազմաբնակարան շենքերի և բնակարանների թիվը	1061 շենք/26355 բն
Համայնքի սեփականություն համարվող բազմաբնակարան շենքերի, հանրակացարանների և բնակարանների թիվը	1 հանրակացարան (Երևանյան խճ. թիվ 90)՝ 55 բնակարան /ՈՒսանողական 14 հանրակացարան՝ 76 բնակարան, վարձակալական կարգով/
Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը, այդ թվում՝	1 759 353 քմ
համայնքային սեփականություն	45 458 քմ
ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն	1 710 886 քմ
պետական սեփականություն	3 009 քմ
Բազմաբնակարան վթարային շենքերի և բնակարանների թիվը	84շենք, 3 280բն.
Համատիրությունների թիվը	61
Բազմաբնակարան շենքերի վերելակների թիվը և վիճակը	163, որից չգործող՝ 42
Բնակելի տների թիվը	7725

8.ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

8.1. Բնության և շրջակա բնական միջավայրի հիմնախնդիրների հայեցակարգ

- Առաջնային խնդիր է համարվում կենցաղային և այլ թափոնների աղբահանության բարելավումը, մասնավորապես նոր ժամանակակից աղբարկղների տեղադրումը, դրանց համար սանիտարական գոտիների առանձնացումը, ինչպես նաև նոր, ժամանակակից աղբատար մեքենաների ձեռքբերումը:
- Կարևոր խնդիր է նաև կենցաղային աղբի համար նոր աղբավայրի գործարկումը, ինչպես նաև շինարարական աղբավայրի արդիականացումը:
- Անհրաժեշտություն է առաջացել «Վանաձոր-Քիմպրոմ» ՓԲԸ-ի՝ Տարոն-4 թաղամասում գտնվող խրամակուտակիչի վերամշակման աշխատանքները վերսկսելը:
- Համայնքի կանաչ տարածքների պահպանության բնագավառում անհրաժեշտ է անձնագրավորել /համարակալել/ տարածքի ծառերն ու թփերը, ծրագրավորել գերհասուն ծառերը նորերով փոխարինելու, հասուն ծառերը էտելու և նոր կանաչ գոտիներ հիմնելու աշխատանքները:
- Խիստ անհրաժեշտ է նաև կանաչ տարածքների, մասնավորապես այգիների ու պուրակների նոր նախագծերի կազմման աշխատանքները, որոնք պետք է անցնեն պարտադիր փորձաքննություն:
- Համայնքում ջրամատակարարում իրականացնող օպերատորի հետ համատեղ միջոցներ են ձեռնարկվելու կեղտաջրերի մաքրման արդի կայան գործարկելու ուղղությամբ:

---

* Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի և Վանաձորի համայնքապետարանի համատեղ գործունեությամբ կազմվում է Վանաձոր քաղաքի «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագիրը»:

8.2. Անտառտնտեսություն

Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ մոտ 29կմ է, արևելքից արևմուտք՝ 65կմ: Անտառտնտեսությունը հյուսիս-արևելքից սահմանակցում է Դսեղի անտառտնտեսությանը, արևելքից՝ «Դիլիջան» ազգային պարկին, արևմուտքից՝ Շիրակի, իսկ հարավից՝ Կոտայքի և Արագածոտնի մարզերի համայնքային հողերին:

ՀՀ	Վանաձորի	Անտառշինության տարին				Տարբերություն
		1991թ.		2007թ.		
		անտառշինություն		անտառշինություն		
		Մակերեսը հա	%	Մակերեսը հա	%	
1		5273	21.8	4989	15.7	-284

8.3. Բուսական և կենդանական աշխարհ

Գուգարքի անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից ունեցած բարձրությամբ: Հյուսիսային Հայաստանի անտառային ֆլորան հիմնականում ներկայացված է Կովկասյան և Բորեալ ֆլորաների տարրերից:

Անտառկազմող գլխավոր ծառատեսակներն են՝ արևելյան հաճարենին, արևելյան և վրացական կաղնին, բոխին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են՝ ղաժին, լորին, հացին, կեչին, սրատերև և դաշտային թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառատուների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր փոքր ծառուտներ:

Ցածր լեռնային գոտում (մինչև 1000մ) անտառային բուսականությունը ներկայացված է ղաժու և կաղնու շիվային ծագման ծառուտներով, իսկ անտառի կազմում զգալի մասնակցություն ունեն վրացական կաղնին, սրապտուղ և սովորական հացին, վրացական և դաշտային թխկին, տերևաշատ թեղին, կաղամախին և այլն: Թփերից հանդիպում են հոնին, սզնին, մասրենին, զկեռենին, մոշենին և այլն; Բոխու և ղաժու համակեցություններն ըստ էության ածանցյալ են, ունեն երկրորդական ծագում և փոխարինել են անցյալում հատված կաղնու անտառներին: 700-1400մ բարձրություններում փոքր խմբերով կամ առանձին ծառերի ձևով աճում է ընկուզենի:

Միջին լեռնային գոտում (1000–1700մ) հյուսիսային կողմնադրության լանջերը հիմնականում զբաղեցնում են հաճարկուտները, հարավային լանջերը՝ կաղնու համակեցությունները: Հաճարկուտներում անտառի կազմի մեջ մտնում են բոխին, կաղնին, լորին, հացին: Բացատներում և անտառի ենթանտառում թփերից հանդիպում են ցախակեռաս, մասրենի, հոնի, զկռենի, կտտկենի:

Հարավային լեռնալանջերի մինչև 1200մ բարձրությունները զբաղեցնում են վրացական կաղնու խառը անտառները: 1200-1400մ բարձրության սահմաններում

վրացական և խոշորառէջ կաղնիները հաճախ աճում են կողք կողքի: 1400մ-ից բարձր, մինչև անտառի տարածման վերին սահմանը, զբաղեցնում են խոշորառէջ կաղնու ծառուտները: Կաղնու անտառներին բնորոշ է խառը կազմ՝ բոխու, հացենու, թխկենու, լորենու, անտառային խնձորենու և տանձենու մասնակցությամբ: Գուգարքի դենդրոֆլորայում հատկապես կարևորվում են սոճուտները, որոնց ծառուտները զբաղեցնում են 2435հա, ընդ որում՝ ուսումնասիրվող տարածաշրջանում են գտնվում Հայաստանում բնական ծագման սոճուտների խոշոր զանգվածները, ընդհանուր մակերեսով 503հա /1992թ. անտառշինություն/, որոնցից 1995թ. և հաջորդող տարիներին իրականացված ծավալուն ինքնակամ հատումների հետևանքով ներկայումս անտառածածկում հաշվառվել է ընդամենը 282 հեկտար, որոնց մեծ մասում լրիվությունը իջեցվել է նվազագույնի: Տարածաշրջանում դեռևս 1959թ. կազմավորվել է երկու արգելավայր, մեկը՝ Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների հյուսիսահայաց ծովի մակերևույթից 1900-2200մ բարձրության լանջերին մոտ 1000 հա մակերեսով Կովկասյան մրտավարդենու, իսկ մյուսը «Դիլիջան» ազգային պարկի անտառների հարևանությամբ անտառի վերին փեշը ընդգրկող 3368 հա մակերեսով Մարգահովիտի արգելավայրն է:

8.4. Անտառների կառուցվածքը

	Անտառի կատեգորիան	Անտառային հողեր, հա												Անտառային հողեր, հա									
		Անտառածածկ			Հեռանկարում ջրհավաքման գոտիներում չգտնվող	Վերամշակումներ և պահեստամասեր	Ոչ անտառածածկ							Ոչ անտառային հողեր, հա									
		ընդամենը	այդ թվում				ընդամենը	այդ թվում							այդ թվում								
			բնական ծագման	արհեստական				հանգստյան գոտիներում չգտնվող ջրհավաքման գոտիներ	բացատներ	Նոսրուտներ													
										ընդամենը	որից												
											Անթափոն ոգեղեն ծագման	Կենսաբանական դիմադրող	Ընդամենը անտառ	ընդամենը	խոտհարքներ	արոտավայրեր	այգիներ	վարելահող	բնակավայրի, կոմունալ ամբարների ջրային մակերեսներ	ճանապարհներ	այլ հողեր	ընդամենը
Վանաձոր	Պաշտպանական	1740	1622.1	117.9	29		402.3	25.1	291.7	85.5	75.4	10.1	2171.3	147.6	1.8	69.5			2.5	9.7	10.5	53.6	2318.9
	Հատուկ նշանակության անտառներ	1257.2	1052.5	204.7	196.4	9.4	824.7	36.5	669.3	118.9	90.9	28	2281.7	147.4	3.4	84.2	4		2.5	12	11.8	29.5	2429.1
	Արտադրական նշանակության անտառներ	193.2	177	16.2			47.8	19.4	8.6	19.8	17.7	2.1	241										241
	Ընդամենը անտառպետությունում	3190.4	2851.6	338.8	225.4	3.4	1274.8	81	969.6	224.2	184	40.2	4694	295	5.2	153.7	4		5	21.7	22.3	83.1	4989

9. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Առևտրի և սպասարկման բնագավառում համայնքապետարանի մարտավարությունն ուղղված է առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների նկատմամբ հսկողության իրականացմանը, համայնքի իրավասության տակ գտնվող ոլորտներից (բացօթյա առևտուր, ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի, հանրային սննդի կազմակերպում և իրացում՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի, տեխնիկական հեղուկներ, հեղուկ վառելիք, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի, արտաքին գովազդ, մարդատար տաքսի ծառայությունների, քաղաքացիական հոգեհանգիստ (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացում և (կամ) մատուցում, ժամը 24^{00}-ից հետո աշխատող օբյեկտների) տեղական տուրքերի հավաքագրման և համայնքի բյուջե մուտքագրման ապահովմանը:

Առևտրի և սպասարկման բնագավառում առկա խնդիրները (բացօթյա առևտրի կանխարգելում, օբյեկտների սպասարկման ծառայությունների վերանայում, համայնքի սահմանված տարածքներում /սեզոնային/ տոնավաճառների կազմակերպում, տեղական տուրքերի հավաքագրման վերահսկում, տեղական տուրքը վճարելուց խուսափող օբյեկտների հայտնաբերում և հաշվառում, պատշաճ հսկողության իրականացում ծխախոտ և ալկոհոլային խմիչքներ վաճառող 18/տասնութ/ տարին չլրացած անձանց նկատմամբ, գովազդվող ապրանքների համար համապատասխան էլեկտրոնային էկրանների տեղակայում) կանոնակարգելու նպատակով համայնքապետարանը նախատեսում է իրականացնել հետևյալ ռազմավարությունը.

- Համայնքի բացօթյա առևտուրը ավելի պատշաճ կազմակերպելու համար նախատեսվում է համայնքում կառուցել առևտրի կենտրոն, դա հնարավորություն կտա անցնելու առևտրի սպասարկման առավել քաղաքակիրթ մեթոդների, ապամոնտաժել մանր կրպակները նպաստելով քաղաքի արտաքին տեսքի բարելավմանը,
- Մշակել համայնքային կանոններ՝ առևտրի, հանրային սննդի և սպասարկման ծառայությունների բնագավառում,
- Ստեղծել տվյալների էլեկտրոնային շտեմարան՝ օբյեկտների հաշվառման աշխատանքների կանոնակարգման, նրանց նկատմամբ հսկողության ուժեղացման ու աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով,
- Վերանայել տեղական տուրքը վճարելուց խուսափող սուբյեկտների նկատմամբ վարչական պատասխանատվություն սահմանելու մեխանիզմները,
- Մասնավոր ներդրումների հաշվին գյուղատնտեսական ապրանքների փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով իրականացնել վայրերի ընտրություն, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում,
- Հսկողություն իրականացնել օրենքով արգելված ապրանքների գովազդի նկատմամբ:

10. ՏՐԱՆՍՊՈՐՏ

Տրանսպորտի համակարգման ոլորտում 2018-2021թթ. ռազմավարությունն ուղղված է համայնքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային նոր համակարգի վերականգնմանն ու արդիականացմանը:

Ուղևորափոխադրումների հիմնական մասը համայնքում դեռևս իրականացվում է միկրոավտոբուսներով:

Համայնքի ներքաղաքային երթուղիները (20 հատ) սպասարկվում են 99 երթուղային տաքսիներով և 6 ավտոբուսներով: Ներքաղաքային ճանապարհային ցանցը կազմում է շուրջ 200 կմ:

Նախատեսվում է վերանայել ուղևորափոխադրումների կազմակերպման մարտավարությունը՝

- Ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացում ավտոբուսային փոխադրումների տեսակարար կշռի ավելացում,
- Միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող կազմակերպությունների քանակի կրճատում,
- Առավել հարմար երթուղիների շահագործում,
- Բանուկ փողոցների բեռնաթափում միկրոավտոբուսներից,
- Բնակչության համար հարմարավետ երթևեկության կազմակերպում:

ՀՀ ճանապարհային ոստիկանության և իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքապետարանը համայնքային ենթակայության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգ երթևեկություն ապահովելու նպատակով իրականացնելու է՝

- Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման աշխատանքներ,
- Չկարգավորվող խաչմերուկների կահավորման աշխատանքներ՝ նոր, օրիգինալ հանդերձանքով,
- Կանգառների կառուցում և վերանորոգում,
- Կանգառներում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- Ճանապարհների նշագծում,
- Լուսացույցների հանման և տեղադրման աշխատանքներ:

11. ՄՇԱԿՈՒՅԹ

Վանաձորի համայնքապետարանի ենթակայության տակ գործում է 7 դպրոց, որից 3-ը՝ երաժշտական, 2-ն՝ արվեստի, ինչպես նաև գեղարվեստի և պարարվեստի մեկական դպրոցներ, դրանցից որոշներն ունեն վերանորոգման կարիք, ինչի ուղղությամբ միջոցների հայթայթման ու ծրագրերի իրականացման խնդիր է դրված: Նպատակ կա համալրելու վերջիններիս նյութատեխնիկական բազան, ապահովելու անհրաժեշտ երաժշտական գործիքներով: Առավել արդյունավետ կառավարման և զարգացման նպատակով անհրաժեշտություն կա վերանայելու և օպտիմալացման ճանապարհով Էդ.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցին միացնել Շարա Տալյանի անվան երաժշտական և Պարարվեստի դպրոցները և ստեղծել Էդ.Կզարթմյանի անվան արվեստի դպրոց, որտեղ, ի թիվս գործող բաժինների, կբացվեն նաև նոր բաժիններ (գեղարվեստի, թատերական և այլն):

Համայնքի ենթակայության տակ գործում է 3 թատրոն՝ տիկնիկային, կամերային և երգի: Դրանք առավել գրավիչ և մրցունակ դարձնելու նպատակով փորձ է արվելու լուծել շենքային պայմանների ստեղծման, եղածների արդիականացման, տեխնիկայի և բեմական հագուստի խնդիրները: Նպատակ կա այդ թատրոնները դուրս բերել նաև քաղաքի և մարզի սահմաններից, դարձնել առավել ճանաչելի, ստեղծել և ամրապնդել այլ համայնքների հետ մշակութային կապերը, ստեղծել համագործակցության և համատեղ ծրագրերի հնարավորություններ:

Համայնքի ենթակայության տակ գործում է նաև 3 մշակույթի տուն: Դրանք ունեն հարուստ պատմություն: Մշակույթի տների խնդիրների լուծման և նրանց գործունեության լուսաբանման միջոցով նպատակ կա սերտ կապեր հաստատել հանրակրթական ոլորտի հետ, հայտնաբերել և զարգացնել շնորհալի երեխաների ընդունակությունները, նրանց դարձնել ճանաչելի, ճանապարհ հարթել կայացման համար:

Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգում ընգրկված է թվով 4 մանկական և մասսայական գրադարան՝ համայնքի տարբեր թաղամասերում: Գրքային ֆոնդը նոր գրքերով, ամսագրերով և թերթերով համալրելու կարիք կա, ինչն իրականացնելու նպատակով կմշակվեն ծրագրեր, ձեռք կբերվեն համաձայնություններ դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունների, ինչպես նաև հրատարակչությունների հետ: Ծրագրվում է լուծել գրադարանների գազաֆիկացման խնդիրը՝ աշխատողների համար համապատասխան աշխատանքային պայմաններ և գրքային ֆոնդի համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով: Իրականացվելու են վերանորոգման, ֆոնդերի թվայնացման, համակարգչային տեխնիկայի և նոր գույքի ձեռքբերման աշխատանքներ:

Համայնքի ենթակայությամբ գործում է 2 թանգարան՝ Ստ.Զորյանի տուն-թանգարանը և Կ.Աբովյանի անվան կերպարվեստի թանգարանը: Դրանք ոչ միայն քաղաքի մշակութային դիմագիծն են ներկայացնում, այլև կարող են դառնալ զբոսաշրջության զարգացման համար կարևոր խթան: Պայմանների բարելավումն ու նյութատեխնիկական

բազայի համալրումը, ցուցասրահների՝ նորագույն տեխնոլոգիաներով համալրումը դրանք կդարձնեն առավել ներկայանալի: Թանգարանները, որ նաև հետազոտական հիմնարկներ են, դարձվելու են պահանջված և համապատասխան գիտական ուսումնսիրությունների, գիտաժողովների, հանդիպումների համար: Վերապատրաստման տարբեր դասընթացների միջոցով անհրաժեշտ է վերապատրաստել էքսկուրսավարներին, թանգարանները համալրել նաև աուդիո-գիդ ծառայության սարքավորումներով՝ անհրաժեշտության դեպքում առանց էքսկուրսավարի թանգարանների ցուցադրություններին ծանոթանալու համար: Որոշ սրահներ վերածվելու են փոքր կինոսրահների՝ տվյալ թանգարանին հատուկ տեսանյութերի և ֆիլմերի ցուցադրության նպատակով:

Կամերային երգչախմբի, կամերային նվագախմբի և Գր.Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժող. համույթի կատարումները մասնագիտական բարձր վարպետության դրսևորումներ են և Վանաձորի մշակութային դիմագծի ամբողջականացման կարևոր բաղադրիչը: Հատկապես վերջին շրջանում «Հորովելի» համերգային շրջագայությունները Հայաստանում և երկրի սահմաններից դուրս համընդհանուր ճանաչման և բարձր գնահատանքի արժանացան ինչպես հանդիսատեսի, այնպես էլ հանրապետությունում հայտնի արվեստագետների կողմից, ինչի շնորհիվ Վանաձորն ավելի գրավիչ դարձավ արվեստագետների և արվեստասերների համար: Ծրագրերը շարունակական են, նպատակ է դրված զբաղվել մյուս բոլոր կատարողական խմբերի համալրմամբ, վարպետության կատարելագործմամբ, համերգների և հյուրախաղերի կազմակերպմամբ, ինչի շնորհիվ Վանաձորն ավելի ներկայանալի և ճանաչելի կդառնա՝ որպես մշակույթի քաղաք:

11.1. Մշակութային հիմնարկներ /համայնքային ենթակայության/

Հ/Հ	ՀԻՄՆԱՐԿԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԱՍՑԵ	ՋԵՌՈՒՑՈՒՄ	ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
1.	Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ	Վարդանաց 41	Կաթսայատուն	ապահովված է անհրաժեշտ նոր գույքով և գործիքներով (նոր և հին)	վերակառուցված-վերանորոգված
2.	Շարա Տալյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ	Վարդանաց 41	Կաթսայատուն	ապահովված է անհրաժեշտ նոր գույքով և գործիքներով (նոր և հին)	վերակառուցված-վերանորոգված
3.	Տիգրան Չուխաջյանի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ	Աղայան 86ա	Լոկալ	ապահովված է անհրաժեշտ գույքով և գործիքներով (նոր և հին)	վերանորոգված
4.	Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ	Ներսիսյան 13	էլեկտրական վառարան	ապահովված է գույքով (հին) և գործիքներով (հին)	վերանորոգված չէ
5.	Կոմիտասի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ	Բաղրամյան 15/1	անհատական համակարգ	ապահովված է անհրաժեշտ գույքով (հին) և գործիքներով (հին)	նորակառույց
6.	Ստ. Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ	Մոսկովյան 30	անհատական համակարգ	ապահովված է հին գույքով և մասնագիտական պարագաներով	վերանորոգված չէ
7.	Պարարվեստի դպրոց ՀՈԱԿ	Վարդանաց 41	կաթսայատուն	ապահովված է անհրաժեշտ նոր գույքով	նորակառույց
8.	Թիվ 1 մշակույթի տուն ՀՈԱԿ	Նարեկացու 43	գազաֆիկացված չէ	ապահովված է հին գույքով	վերանորոգված չէ
9.	Թիվ 2 մշակույթի տուն ՀՈԱԿ	Ուսանողական 6	փայտ և էլեկտրաէներգիա	ապահովված է հին գույքով	վերանորոգված չէ
10.	Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տուն ՀՈԱԿ	Զորավար Անդրանիկ 38	գազաֆիկացված	ապահովված է անհրաժեշտ գույքով և գործիքներով (նոր և հին)	վերանորոգված
11.	Հրանթ Մաթևոսյանի անվ. գրադարանների կենտրոնացված համակարգ ՀՈԱԿ	Թատերական 2	փայտ և էլեկտրաէներգիա	ապահովված է անհրաժեշտ գույքով (հին)	վերանորոգված չէ
12.	Ստ. Զորյանի տուն-թանգարան ՀՈԱԿ	Ստ. Զորյան 24	անհատական համակարգ	ապահովված է անհրաժեշտ գույքով (նոր)	վերանորոգված
13.	Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ	Տիգրան Մեծ 58	մասնակի գազաֆիկացված	ապահովված է անհրաժեշտ գույքով (հին)	վերանորոգված չէ
14.	Կամերային երգչախումբ ՀՈԱԿ	Մյասնիկյան 22/1	-	ապահովված է բեմական հագուստներով, գույք չունի	չունի շենքային պայմաններ
15.	Կամերային նվագախումբ ՀՈԱԿ	Վարդանանց 25	-	գույք չունի	չունի շենքային պայմաններ
16.	Գր.Հախինյանի անվան «Հորովել» ժող. երգի-պարի համույթ ՀՈԱԿ	Տիգրան Մեծ 2	կաթսայատուն	ապահովված է գույքով (հին), բեմական հագուստներով	վերակառուցված

17.	Տիկնիկային Թատրոն ՀՈԱԿ	Վարդանանց 110ա	գազ և էլեկտրաէներգիա	ապահովված է անհրաժեշտ գույքով (հին)	անբավարար
18.	«Բոհեմ» կամերային թատրոն ՀՈԱԿ	Տիգրան Մեծ 2	-	գույք չունի	չունի շենքային պայմաններ
19.	Երգի թատրոն ՀՈԱԿ	Թատերական 4ա	գազի վառարաններ	բեմական հագուստի հավաքածու, գույք չունի	չունի շենքային պայմաններ

Մշակույթի ոլորտում 2018-2021թթ. ռազմավարությունը

2018-2021թթ. զարգացման ծրագրում հաշվի են առնվել վերջին տարիների փորձը, ձեռքբերումները և բացթողումները, ինչպես նաև կատարված և ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ մեխանիզմները: Ծրագրով առաջիկա տարիներին յուրաքանչյուր վանաձորցու համար տեսանելի պետք է լինեն այն բոլոր աշխատանքները, որոնք կկատարվեն մշակույթի ոլորտում և որոնք էականորեն կբարելավեն համայնքի մշակութային միջոցառումներին երիտասարդության ներգրավվածության մեծացման, ինչպես նաև տուրիստական կազմակերպությունների համար համայնքն էլ ավելի գրավիչ դարձնելու համար:

- Նախատեսվում է վերականգնել Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին նվիրված հուշարձանի անմար կրակը, կատարել հուշարձանի վերականգնման աշխատանքներ, ավելի բարեկարգ դարձնել հուշակոթողի հարակից տարածքը:
- Սկսել Արցախի և Հայաստանի անկախության մարտերում զոհված հայորդիների հիշատակին նվիրված հուշարձանի նախագծման և տեղադրման աշխատանքները:
- Հայքի հրապարակի ճարտարապետական և գեղարվեստական տեսքի պահպանման և թարմացման նպատակով նախատեսվում է կենտրոնական հատվածում ստեղծել քարե գորգ: Կկատարվեն Հայքի հրապարակի քարե բեմահարթակի վերանորոգման և հարմարեցման աշխատանքներ՝ հարթակի ամբողջ մակերեսի չափով ռետինե գորգի տեղադրում:
- Հայքի հրապարակում և բոլոր այգիներում ու պուրակներում նախատեսվում է տեղադրել բարձրախոսներ՝ տոնական և հանգստի օրերին տարածքում երաժշտություն միացնելու և ժամանցի համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:
- Արցախ պուրակում նախատեսվում է տեղադրել հայ մեծանուն անհատների և մերօրյա հերոսների մեծադիր լուսանկարները, նրանց կյանքի և գործի մասին պատմող գրություններով:
- Քաղաքային Սայաթ-Նովայի անվան զբոսայգում նախատեսվում է ստեղծել բացօթյա ծածկով բեմահարթակ՝ համերգների, տարատեսակ միջոցառումների անցկացման համար: Բեմահարթակը կծառայեցվի նաև որպես բացօթյա կինոթատրոն:
- Բացօթյա բեմահարթակ նախատեսվում է կառուցել նաև տիկնիկային թատրոնի և գեղագիտության ազգային կենտրոնի հարակից տարածքում:

Նոր նախաձեռնություններ

- Առաջնահերթ և հրատապ է Վանաձորի ժամանակակից արվեստների կենտրոնի ստեղծումը, որն իր մեջ կներառի արվեստի բոլոր ճյուղերը, երիտասարդների համար ստեղծելով պայմաններ աշխատելու և միմյանց հետ համագործակցված ծրագրեր ստեղծելու և կյանքի կոչելու համար:

- Նախատեսված է կյանքի կոչել «Վանաձոր» գրքի եռալեզու հրատարակությունը, որը նախատեսված կլինի ինչպես վանաձորցիների, այնպես էլ հյուրերի համար: Գրքում ներկայացվելու են Վանաձոր քաղաքի պատմությունը, տեսարժան վայրերի լուսանկարները՝ համապատասխան տեղեկություններով:
- Նախատեսվում է տարածք տրամադրել քաղաքի մի հատվածում, որտեղ կստեղծվեն համապատասխան տաղավարներ (Վերնիսաժ)՝ քաղաքին նվիրված հուշանվերների, ձեռքի աշխատանքների վաճառքի համար: Այս տարածքում նախատեսվում է նաև առանձին հատված լոռեցի և մասնավորապես վանաձորցի հեղինակների գրքերի ցուցահանդես-վաճառքի համար, ինչը նոր խթան կհանդիսանա հատկապես երիտասարդ ստեղծագործողների համար: Որպես այս ծրագրի մի մաս նախատեսվում է նաև համագործակցություն և աջակցություն Վանաձոր քաղաքին նվիրված հուշանվերների ստեղծման համար:
- Վանաձորում կստեղծվի նաև կենտրոնական տոմսարկղ, համայնքում և դրա տարածքից դուրս կազմակերպվող միջոցառումների տոմսերի վաճառքի համար, որը նաև կկարգավորվի մայրաքաղաքի թատրոնների, կինոթատրոնների և համերգասրահների հետ համապատասխան պայմանագրերով:
- Կմեկնարկվեն նաև քաղաքի մուտքերը խորհրդանշող ցուցանակների նախագծային աշխատանքները:
- Քաղաքի տարբեր թաղամասերում կազմակերպել և զարգացնել փողոցային նկարչության (street art) մշակույթը:
- Տեղի և արտասահմանյան հյուրերի համար համայնքն ավելի հասանելի դարձնելու և արտասահմանյան հյուրերին դեպի համայնք գրավելու համար նախատեսվում է ստեղծել Վանաձորի տուրիստական քարտեզ, կանգառներում կտեղադրվեն QR կոդեր քաղաքի վերաբերյալ տեղեկատվությամբ: Բոլոր այգիներում և պուրակներում նախատեսվում է տեղադրել դեկորատիվ նստարաններ, ծաղկամաններ և այլ հետաքրքիր կոնստրուկցիաներ՝ առավել հրապուրիչ դարձնելու համար այդ հանրային տարածքները:
- Նախատեսվում է ձեռք բերել մետաղական բեմահարթակ՝ համապատասխան լուսային և ձայնային ժամանակակից տեխնիկայով, համայնքային և պետական տոների ժամանակ օգտագործելու համար:
- Վանաձորի օրվան ընդառաջ 1 օր կհայտարարվի հուշարձանների մաքրման և լվացման օր:
- Զարգացման ծրագրի տարիների ընթացքում կշարունակվեն մեծ շուքով նշվել բոլոր ավանդական դարձած տոնակատարությունները, միջազգային և պետական տոները՝ յուրաքանչյուր տարի էլ ավելի բարձրացնելով դրանց անցկացման մակարդակը, մասսայականությունը և աշխարհագրությունը:
- Կշարունակվեն արդեն ստեղծված փառատոներն ու մրցույթները, կստեղծվեն նորերը, կզարգացվեն նոր համագործակցություններ, մասնավորապես Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի հետ՝ հոգևոր տոներին համայնքի ակտիվ մասնակցության

համար: Համագործակցության նպատակով կստորագրվեն հուշագրեր տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Ավելի բարձր մակարդակի վրա կդրվի համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, խոցելի խմբերի, տարեցների տան, մանկատան, վետերանների խորհրդի, երկրապահ կամավորականների և այլ կազմակերպությունների հետ:

12. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վանաձորում գործում են թվով 21 հիմնական, 2 միջնակարգ, 7 ավագ, 1 հատուկ դպրոցներ, 6 համալսարաններ, 6 քոլեջներ և ուսումնարաններ, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը:

Համայնքի կրթական ռազմավարությունը նպատակաուղղված է գիտակրթական համակարգի վերակառուցմանը, ուսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրմանը: Հանրակրթության ներկա փուլի հիմնական խնդիրը շարունակում է մնալ կրթության որակի և մատչելիության ապահովումը: Վերջին տարիների իրականացված բարեփոխումները հնարավորություն են ընձեռել լուծել համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնել իրավիճակը, նախադրյալներ ստեղծել զարգացման համար:

Համայնքապետարանը կարևորելով դպրոցականների գեղագիտական և բարոյական դաստիարակությունը իրականացնելու է բազմաբնույթ միջոցառումներ դպրոցականներին մշակութային կյանքին մասնակից դարձնելու նպատակով:

12.1. Նախադպրոցական կրթություն

Վանաձորի համայնքապետարանի ենթակայությամբ գործում է 20 ՆՈՒՀ: Նախատեսվում է բարելավել շենքային պայմանները թարմացնել ՆՈՒՀ-երի գույքը, ստեղծել հարմարավետ և ժամանակակից խաղահրապարակներ, մանկապարտեզներում գերբեռնվածության խնդրի լուծման նպատակով ստեղծել նոր խմբեր: Այսօր դեռևս չլուծված է համայնքում գործող 4 տնակային մանկապարտեզների համար շենքեր կառուցելու և կահավորելու խնդիրը: Այս նպատակով փորձելու ենք գտնել համագործակցության եզրեր միջազգային և բարեգործական կազմակերպությունների հետ, ներգրավվել դրամաշնորհային ծրագրերում: Վերջին տարիներին կրթության ոլորտում փոփոխություններն արագ են հաջորդում միմյանց: Մանկավարժները որակյալ փոփոխություններից հետ չպիտի մնան: Այդ նպատակով կանցկացվեն են վերապատրաստման դասընթացներ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ / համայնքային ենթակայության/

h/h	ՀԻՄՆԱՐԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՑԵ	ԽՄԲԵՐԻ ՔԱՆԱԿ/ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ	ՋԵՌՈՒՑՈՒՄ	ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
1.	Ֆ. Նանսենի անվան թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Մյասնիկյան 28	4 խումբ, 160 երեխա	լոկալ	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային, վերանորոգված
2.	Թիվ 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Շիրակի խճուղի 64	2 խումբ, 60 երեխա	անհ. համակարգ	ապահովված է հին գույքով	տնակային
3.	Թիվ 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Սայաթ-Նովա 18	2 խումբ, 50 երեխա	փայտի վառարան	ապահովված է հին գույքով	տնակային
4.	Թիվ 5 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Մաշտոցի 14	6 խումբ, 160 երեխա	անհ. համակարգ	ապահովված է գույքով(հին և նոր)	քարե շենք, տիպային
5.	Թիվ 7 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Նարեկացու 47	2խումբ, 45 երեխա	փայտի վառարան	ապահովված է հին գույքով	քարե շենք, հարմարեցված
6.	Թիվ 8 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Գորկու 9ա	6 խումբ, 150 երեխա	փայտի վառարան	ապահովված է հին գույքով	տնակային
7.	Թիվ 10 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Չուխաջյան 12	2 խումբ, 70 երեխա	լոկալ	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային
8.	Թիվ 11 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Չուխաջյան 18ա	3խումբ, 90 երեխա	փայտ և էլեկտրաէներգիա	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային
9.	Թիվ 15 Ս. Մարիամ Աստվածածին ՆՈՒՀ ՀՈԱԿ	Նալբանդյան 1/3	3 խումբ, 115 երեխա	կաթսայատուն	ապահովված է նոր գույքով	քարե շենք, տիպային
10.	Մ.Մատինյանի թիվ 19 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Սուխումի 5	3 խումբ, 109 երեխա	անհ. համակարգ	ապահովված է նոր գույքով	քարե շենք, տիպային, վերանորոգված
11.	Թիվ 24 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Լազյան 32	4 խումբ, 120 երեխա	կաթսայատուն	ապահովված է գույքով (հին և նոր)	քարե շենք, տիպային, վերանորոգված
12.	Թիվ 28 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Աբեղյան 46ա	3 խումբ, 65 երեխա	կաթսա	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային
13.	Թիվ 30 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Շինարարների 91	4 խումբ, 136 երեխա	լոկալ	ապահովված է նոր գույքով	քարե շենք, տիպային, վերանորոգված

14.	Թիվ 31 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Ներսիսյան թաղ. 6	4 խումբ, 130 երեխա	լոկալ	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային, վերանորոգման ընթացքի մեջ է
15.	Թիվ 32 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Տարոն 4 Բելառուս. թաղ.	2 խումբ, 65 երեխա	անհ. համակարգ	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային
16.	Թիվ 33 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Տարոն 3 ՔՇՀ 7	4 խումբ, 100 երեխա	լոկալ	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային
17.	Թիվ 34 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Տարոն 3 ՔՇՀ 7	2 խումբ, 70 երեխա	փայտ և էլեկտրաէներգիա	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային
18.	Թիվ 35 ՆՈՒՀ ՀՈԱԿ	Տարոն 4 Աձխահատեր	3 խումբ, 127 երեխա	լոկալ	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային
19.	Թիվ 40ՆՈՒՀ ՀՈԱԿ	Տարոն 2 ՔՇՀ 3	2 խումբ, 75 երեխա	լոկալ	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային
20.	Թիվ 41ՆՈՒՀ ՀՈԱԿ	Շիրակացու 17ա	2 խումբ, 60 երեխա	կաթսա	ապահովված է հին գույքով	քարե շենք, տիպային

12.2. Դպրոցներ

	ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ
1	Վանաձորի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն 1-ինի անվան N1 հիմնական դպրոց
2	Վանաձորի Ա.Իսահակյանի անվան N2 հիմնական դպրոց
3	Վանաձորի Հ.Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց
4	Վանաձորի Ա.Պուշկինի անվան N4 հիմնական դպրոց
5	Վանաձորի Ս.Շահումյանի անվան N6 հիմնական դպրոց
6	Վանաձորի Ա.Բակունցի անվան N7 հիմնական դպրոց
7	Վանաձորի N8 հիմնական դպրոց
8	Վանաձորի Խ.Աբովյանի անվան N9 հիմնական դպրոց
9	Վանաձորի Ե.Չարենցի անվան N12 հիմնական դպրոց
10	Վանաձորի Մեսրոպ Մաշտոցի անվան N15 հիմնական դպրոց
11	Վանաձորի Դ.Վարուժանի անվան N16 հիմնական դպրոց
12	Վանաձորի Ռաֆֆու անվան N19 հիմնական դպրոց
13	Վանաձորի Պաբլո Տիչինայի անվան N20 հիմնական դպրոց
14	Վանաձորի Գայի անվան N21 հիմնական դպրոց
15	Վանաձորի N22 հիմնական դպրոց
16	Վանաձորի N23 հիմնական դպրոց
17	Վանաձորի Վ.Համբարձումյանի անվան N25 հիմնական դպրոց
18	Վանաձորի Մարշալ Բաղրամյանի անվան N26 հիմնական դպրոց
19	Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N27 հիմնական դպրոց
20	Վանաձորի «Վիդրոջենյա» N28 հիմնական դպրոց
21	Վանաձորի Պ. Սևակի անվան N 30 հիմնական դպրոց
	ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐ
1	Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան N18 միջնակարգ դպրոց
2	Վանաձորի Գևորգ Չաուշի անվան N24 միջնակարգ դպրոց
	ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐ
1	Վանաձորի Վահան Տերյանի անվան N5 ավագ դպրոց
2	Վանաձորի Սայաթ-Նովայի անվան N10 ավագ դպրոց
3	Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց
4	Վանաձորի Սոս Նալչռանյանի անվան N13 ավագ դպրոց
5	Վանաձորի Մովսես Խորենացու անվան N17 ավագ դպրոց
6	Վանաձորի պետական համալսարանի հենակետային վարժարան
7	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոց
	ԱՅԼ
1	Վանաձորի Նազիկ Գրիգորյանի անվան մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ “Էվրիկա” հատուկ դպրոց

12.3. Քոլեջներ, ուսումնարաններ

1	Վանաձորի Կ.Ղարաքեշյանի անվան N1 արհեստագործական պետական ուսումնարան
2	Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ
3	Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ
4	Վանաձորի Ս.Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ
5	Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ
6	Վանաձորի պետական բժշկական քոլեջ

12.4. Համալսարաններ

1	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան
2	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ
3	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ
4	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղ
5	Մխիթար Գոշ հայ-ռուսական միջազգային համալսարան
6	Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղ

Հաշվի առնելով Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) կարևորությունը՝ մարզի և քաղաքի զարգացման գերակայությունների համատեքստում, նախատեսվում է ՎՏԿ –ի հետ հաստատել համագործակցության հուշագիր:

13. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

13.1. Ֆիզիկական կուլտուրա եվ սպորտ

Վանաձորի համայնքապետարանի ենթակայությամբ գործում է 10 մարզադպրոց, որտեղ գործող 20 մարզաձևերի 212 խմբերում մարզվում են մոտ 2200 մարզիկ, 125 մարզիչ-մանկավարժի գլխավորությամբ:

2017թ. ընթացքում աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, աշխարհի և Եվրոպայի գավաթի խաղարկություններին մասնակցել են թվով 23 մարզիկ: 21 տարվա դադարից հետո Վանաձորն ունեցավ աշխարհի չեմպիոն՝ սամբո ըմբշամարտիկ Տիգրան Կիրակոսյանը դարձել է աշխարհի և Եվրոպայի չեմպիոն, ընդգրկվել 2017թ. Հայաստանի Հանրապետության տասը լավագույն մարզիկների ցուցակում: Նա արժանացել է ՀՀ "Սպորտի վաստակավոր վարպետի" կոչման: Տարբեր մարզաձևերից 10 մարզիկ դարձել են աշխարհի, Եվրոպայի առաջնության մրցանակակիր:

Հաշմանդամ մարզիկներից 1 մարզիկ դարձել է դահուկավազքի "Հատուկ օլիմպիադայի" 1000մ տարածության արծաթե մեդալակիր, 1 մարզիկ՝ ձյուդոյի սուրդլիմպիկ խաղերի արծաթե մեդալակիր: ՀՀ հավաքական թիմերում ընդգրկվել են 82 մարզիկ, միջազգային մրցաշարերին մասնակցել են 112 մարզիկ, ՀՀ առաջնություններին մասնակցել են 450 և ավել մարզիկներ, հաղթող են դարձել 47 մարզիկ:

2017թ. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական քաղաք» հանրապետական ստուգատեսում Վանաձոր համայնքը ճանաչվել է հաղթող:

Մարզադպրոցները խիստ կարիք ունեն մարզագույքի արդիականացման, շենքային պայմանների բարելավման, ֆուտբոլի և ծանրամարտի մարզադպրոցներն ունեն կապիտալ վերանորոգման կարիք: Անհրաժեշտ է ունենալ տիպային մարզահրապարակներ՝ հագեցած վարժասարքերով, ըստ թաղամասերի:

Լուրջ մտահոգության տեղիք է տալիս համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապատանեկան մարզադպրոցների կադրային ապահովության հարցը: Տարեցտարի մարզիչ-մանկավարժների մասնագիտությունը կորցնում է իր վարկանիշը ցածր վարձատրության պատճառով:

2018թ նախատեսված է 23 մարզական-մասսայական միջոցառում:

Ազգաբնակչության առողջության ամրապնդման, անհատի ներդաշնակ զարգացման, առողջ սերունդ ունենալու, ինչպես նաև բարձրակարգ մարզիկներ պատրաստելու համար, ավելացնել համայնքում մարզական-մասսայական միջոցառումները, ստեղծել ժամանակակից չափորոշիչներին համապատասխան մարզաբազաներ, ձեռքբերել մարզագույք, մարզահագուստ, կազմակերպել ըստ մարզաձևերի ուսումնամարզական հավաքներ:

Նպատակահարմար է քաղաքում զարգացնել հեծանվային մարզաձևը՝ բնակչության շրջանում խթանելով առողջ ապրելակերպը:

13.2 Մարզադպրոցների վերաբերյալ տվյալներ

h/h	Մարզադպրոցի անվանումը	Ենթակայությունը	Մարզաձևերը	Խմբերը	Մարզիկների թիվը	Աշխատողների թիվը	Հասցե,	Շենքային պայմաններ	Գույքային վիճակը
			2017	2017	2017				
1	“Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց” ՀՈԱԿ (ՕՀՄՄՄԴ)	Համայնքային	Ազատ ըմբշամարտ	15	144	29	Աղայան 72/1	քարաշեն վերանորոգված	բավարար
			բռնցքամարտ	7	70				
			ձյուդո	3	30				
			սամբո	6	58				
2	“Ծանրամարտի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց” ՀՈԱԿ		Ծանրամարտ	22	156	22	Զորավար Անդրանիկի 8ա	փայտե շինություն, վերակառուցման ենթակա	վատ
3	“Շախմատի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց” ՀՈԱԿ		Շախմատ	21	224	20	Տիգրան Մեծի 2բ	քարաշեն նորակառույց	լավ
4	“Մենապայքարային մարզաձևերի մասնագիտացված մարզադպրոց” ՀՈԱԿ		Բռնցքամարտ	9	92	21	Սուխումի 5	քարաշեն մասնակի վերանորոգված	Ոչ բավարար
			սուսերամարտ	2	20				
			ձյուդո	8	80				
5	“Աթլետիկայի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց” ՀՈԱԿ		Աթլետիկա	21	182	27	Զորավար Անդրանիկի 8բ	քարաշեն վերանորոգված չէ	վատ
6	“Ֆուտբոլի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց” ՀՈԱԿ		Ֆուտբոլ	19	255	25	Հակոբյան 1ա	փայտե հին կառույց, վերակառուցման ենթակա	անմխիթար, ոչ պիտանի օգտագործման համար
7	“Ա Ազարյանի անվան “Կենտրոն” համալիր մարզադպրոց” ՀՈԱԿ		Սպ.մարմն.	8	72	31	Մխիթար Հերացու 41	քարաշեն վերանորոգված	Մասնակի բավարար
			սպ. ակրոբատ.	4	36				
			վոլեյբոլ	4	47				
			բասկետբոլ	4	52				
			սեղանի թենիս	4	36				
			թենիս	1	10				
			ձեռքի գնդակ	4	46				
8			բասկետբոլ	4	50	20		քարաշեն	լավ

	“Տարոն” համալիր մարզադպրոց” ՀՈԱԿ		շախմատ	**4**	**42**		Տարոն –4, Բելառուսների 42գ	մասնակի վերանորոգված	
			սեղանի թենիս	**4**	**40**				
			բադմինտոն	**2**	**20**				
			ձյուդո	**2**	**22**				
9	“Լողի մասնագիտացված մանկապա-տանեկան մարզադպրոց” ՀՈԱԿ		լող	**21**	**234**	**19**	Մխիթար Հերացու 24	նորակառույց	բավարար
10	“Ձմեռային մարզաձևերի մասնագի-տացված մանկապատանեկան մարզադպրոց” ՀՈԱԿ		դահուկ	**6**	**44**	**14**	Զորավար Անդրանիկի 8բ	քարաշեն վերանորոգված	մարզադպրոց ն ունի մար-զագույքի կարիք
			լեռնադահուկ	**7**	**71**				

13.3 Համայնքը սպասարկող առողջապահական ընկերություններ

1.**Հիվանդանոցներ՝ 2**

ԱՆՎԱՆՈՒՄԸ	ենթակայությունը	Մահճակալների թիվը	Օբյեկտի նախագծային հզորությունը՝ քմ	Բժիշկների և այլ աշխատողների ընդհանուր թիվը /մարդ/
		2016	2016	2016
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Մարզային	190	1. Վիրաբուժական մասնաշենք-2107.3	461
			2. Մանկական վիրաբ. «Նարեկ» մասնաշենք-2176.3	
			3. Ծննդատան մասնաշենք-1961.52	
			4. Թերապևտիկ մասնաշենք՝ -3308.71	
			5.Քիթ-կոկորդ-ականջաբանական մասնաշենք-335.68	
			6.Ակնաբուժական մասնաշենք-231.44	
			7.Շտապ բուժ/օգնության շինութ-312.76	
			8.Ախտաբանաանատոմիական բաժ.շենք-293.8	
			9.Դիահերձարան- 261.0	
			10.Կաթսայատուն- 261.0	
«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ	Մարզային	45	1.Ստացիոնար մասնաշենք- 951.69	49
			2.Հակապալարախտային մասնաշենք-326.35	

2.Այլ առողջապահական կենտրոններ՝ պոլիկլինիկաներ- 4

Յուրաքանչյուր հաստատության համար՝

ԱՆՎԱՆՈՒՄԸ	ենթա կայությունը	Մասնա գիտացումը	Օբյեկտի նախագծային հզորությունը՝ քմ	Բժիշկների և այլ աշխատողների ընդհանուր թիվը/մարդ/
			2016	2016
«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ		Առաջնային բժշկական օգնություն և սպասարկում,	1. Պոլիկլինիկայի հիմնական մասնաշենք- 2134.01	135
			2. Պոլիկլինիկայի 2-րդ մասնաշենք-936.1	

«Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ	Մարզային	հիվանդությունների կանխարգելում և վերահսկում	Պոլիկլինիկայի շենք-1945.6	96
«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ			Պոլիկլինիկայի շենք- 1400	84
«Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ			1.Պոլիկլինիկայի շենք-2710.0 2.Ընտանեկան բժշկի գրասենյակ- 182.52	75

3.Առողջապահական կենտրոններ /դիսպանսերներ/ թիվը՝ 1, այլ՝ 1

Յուրաքանչյուր հաստատության համար

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նշանակության մակարդակը	Մասնագիտացումը	Օբյեկտի նախագծային հզորությունը՝ քմ	Բժիշկների և այլ աշխատողների ընդհանուր թիվը/մարդ/
			2016	2016
«Լոռու մարզային հոգեբուժական դիսպանսեր» ՊՓԲԸ	Մարզային	հոգեբուժական և նարկոլոգիական ծառայություն	1016.14	54
«Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ		Մարզի տարածքում արյան փոխներարկման գծով աշխատանքների կազմակերպում (արյան և նրա բաղադրամասերի, ստանդարտ շիճուկների պատրաստում, անվտանգ արյան մատակարարում, մարզի առողջապահական ընկերություններին):	214.64	16

14. ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման հիմնախնդիրն իրատեսական և երկարաժամկետ արդյունավետություն ունեցող ծրագրերի մշակումն է: Նախատեսվում է պարբերաբար մշակել ներդրումային ծրագրեր՝ միտված համայնքի հիմնախնդիրների արդյունավետ և օրիգինալ լուծումներին, ինչպես նաև՝ թիրախային-ոլորտային ծրագրեր: Քայլեր կձեռնարկվեն ՀՀ-ում գործող տարբեր գերատեսչությունների, հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցային ծրագեր իրականացնելու նպատակով:

Կարևորելով միջազգային համագործակցությունը, որպես համայնքի արդյունավետ զարգացման բաղադրիչ՝ համայնքապետարանը կշարունակի համագործակցային ծրագրերին մասնակցելու աշխատանքները, տարբեր ձևաչափերով, ձեռնարկելով նախաձեռնողական գործնական քայլեր:

Վանաձորի և քույր քաղաքների միջև կնքվել են պայմանագրեր, համաձայն որոնց քույր քաղաքների միջև առկա է համագործակցություն մշակույթի, տուրիզմի, տնտեսության, կրթության, առողջապահության և սպորտի բնագավառներում: Նախատեսվում է քարտեզագրել քույր քաղաքների հետ համագործակցության դաշտը, նրանց հետ փոխշահավետ գործունեություն և ծրագրեր իրականացնելու նպատակներով:

Վանաձոր համայնքը համագործակցում է

Պետություն	*Քաղաք*	*Համագործակցության սկիզբ*
Ֆրանսիա	Բանյո	1967թ.
ԱՄՆ	Փասադենա	1992թ.
Չինաստան	Ցյուլչժոու	2001թ.
ՌԴ	Պոդոլսկ	2004թ.
ՌԴ	Կիսլովոդսկ	2005թ.
Վրաստան	Բաթում	2006թ.
Էստոնիա	Մաարդու	2007թ.
Բելառուսիա	Վիտեբսկ	2012թ.
Լեհաստան	Լյուբլին	2017թ.

2018-2021 թվականներին բաժնի ռազմավարությունն է՝

- Վանաձորի բրենդավորման քարտեզի հայեցակարգային մշակում
- Միջազգային համագործակցության ընդլայնում,

- Քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացում,
- Հանդիպում քույր քաղաքների հայ համայնքների և հայկական կազմակերպությունների հետ,
- Սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ աշխատանքների ակտիվացում,
- Համայնքային խնդիրների լուծմանը միտված միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն ու կիրառում,
- Համայնքի տարբեր բնագավառների զարգացմանն ուղղված միկրոծրագրերի մշակում, որոնք համահունչ կլինեն առկա մարտահրավերներին,
- Համայնքի զբոսաշրջության գրավչության բարձրացման հայեցակարգի մշակում և ծրագրային հստակեցում,
- Հայաստանում գործունեություն ծավալող տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ անմիջական կապի ստեղծում և համատեղ ծրագրերի իրականացում,
- Տարածաշրջանային կառույցների հետ տեխնիկական աջակցության տրամադրման ծրագրերի մշակում,
- Համայնքի, ինչպես նաև գործարար միջավայրի և ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը միջազգային ցուցահանդեսներին, գիտաժողովներին ներկայացնելու ուղղությամբ քայլերի ձեռնարկում,
- Սփյուռքի ներուժի ներգրավում՝ համայնքային խնդիրների լուծման գործում,
- Վանաձորի համայնքապետարանի vanadzor.am պաշտոնական կայքէջի արդիականացում, կայքի եռալեզու տարբերակի թողարկում, հարց ու պատասխան բաժնի ակտիվացում,
- Կից կայքերի ստեղծում, որոնք կլուսաբանեն համայնքի մշակութային, մարզական կյանքը և կխթանեն տուրիզմի զարգացմանը:
- SS ոլորտում ծրագրերի նախաձեռնում և իրականացում
- Համատեղ ծրագրերի իրականացում Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ
- Տարեկան անվանակարգերի մրցույթների ինստիտուտի գործարկում (“Լավագույն ճարտարագետ”, “Լավագույն կրթական հաստատություն”, “Լավագույն նորարար համատիրություն”, “Լավագույն համայնքային ծառայող”, “Լավագույն համայնքային մենեջեր” և այլն)
- Քայլեր ձեռնարկել Վանաձորում արտերկրյա հյուպատոսական կետեր/անկյուններ բացելու ուղղությամբ

15. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի 2018-2021թթ. ռազմավարությունը համայնքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորման նպատակադրում ունի. ուշադրության կենտրոնում են պահվելու կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց, աղքատ, բազմազավակ, պատերազմի վետերանների, զոհված ազատամարտիկների ընտանիքների, տարեցների և հաշմանդամների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, խնամատար ընտանիքների, բնակարան չունեցող ընտանիքների և անօթևան անձանց սոցիալական պաշտպանության խնդիրները:

Օրենսդրորեն ամրագրված իրավասությունների շրջանակներում՝ համայնքապետարանը բնակչության սոցիալական հիմնահարցերի լուծման ուղղությամբ իրականացնում է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորություններ:

Որպես աղքատության հաղթահարման կարևորագույն գործիք՝ առանձնահատուկ դեր և նշանակություն ունի ՀՀ կառավարության կողմից սահմանված ընտանեկան նպաստը (աղյուսակ 1):

Քաղաքացիների սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետության բարձրացման ժամանակակից, որակյալ և մատչելի սոցիալական ծառայությունների մատուցման համար Վանաձորի սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնում ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ, որի նպատակը՝ ՀՀ-ում պետության կողմից սոցիալական սպասարկման կենտրոններում նախանշված բարեփոխումների իրականացումն է, ինչպես նաև «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառումը: Ակնկալվում է նոր որակի ծառայությունների տրամադրում, սոցիալական ծառայությունների մատչելի մատուցում, սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակությունն ապահովող ինքնաշխատ ծրագրի կիրառում և հասցեականության մեծացում:

Համալիր կենտրոնում համայնքապետարանի և սոցիալական աջակցության տարածքային բաժնի կողմից նախատեսվում է՝

- Համայնքային սոցիալական աջակցության ցանցի ստեղծում,
- Դեպք վարողի և համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացում,
- Համայնքի սոցիալական կարիքների քարտեզագրում,
- Տեղական սոցիալական պլանների մշակում և իրականացում:

Թեև սոցիալական քաղաքանության ոլորտում համայնքապետարանի օրենքով ամրագրված լիազորությունների շրջանակը նեղ է (գերակշիռ մասը կրում է կամավոր բնույթ), սակայն համայնքապետարանը, համաձայն տեղական ինքնակառավարման հանրաճանաչ սկզբունքների, պարտավորություն է կրում բազմաթիվ սոցիալական հիմնախնդիրների լուծման համար: Ակտիվացվելու են սոցիալական հիմնահարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքները և յուրաքանչյուր տարի ավելացնելու են

սոցիալական ծառայությունների մատուցման համար նախատեսվող ֆինանսական միջոցները՝ դրանք հասցնելով համայնքի սեփական եկամուտների շուրջ 3%-ի:

Վանաձոր համայնքում գործում են՝

- Սոցիալական աջակցության տարածքային բաժին,
- «ՀՀ աշխատանքի պետական տեսչության» Լոռու մարզի տարածքային կենտրոն,
- Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին,
- «ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության» գործակալության Լոռու մարզային բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողով,
- «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային (մարզային) կենտրոն,
- ՀՀ ԱՍՆ ենթակայությամբ գործող Վանաձորի մանկատուն,
- Վանաձորի «Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ:

Առաջիկա տարիներին համայնքապետարանը շարունակելու է համագործակցությունը համայնքում գործող և բազմաբնույթ սոցիալական ծառայություններ մատուցող հասարակական և կրոնական հետևյալ կազմակերպությունների հետ և այս ոլորտում փնտրելու է համագործակցության նոր ուղիներ.

- «Վանաձորի տարեցների տուն» ծերանոց
- Բարեգործական հիմունքներով գործող «Հույսի» ծերանոց
- Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմ
- Մայր Աթուռ Սուրբ Էջմիածնի բարեգործական ճաշարանի Վանաձորի մասնաճյուղ
- «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպություն
- «Հովարդ Կարագյոզյան» բժշկական ԲՀԿ
- «Հայկական կարմիր խաչի» Լոռու մարզային մասնաճյուղ
- Վանաձորի «Երկրապահ կամավորականների» միություն
- «Մանկական կենտրոն» ՀԿ,
- «Շող» և «Օրրան» ցերեկային կենտրոններ
- «Առավոտ» ՀԿ
- «Արարատ Առաքելություն» բարեգործական կազմակերպություն
- «ՀԿ» կենտրոն
- «Անվտանգ մանկություն»
- «Հայ ժողովրդավարական ֆորուում» ՀԿ
- «Մամա-պլուս» կենտրոն
- «Փոքր իշխան» ԲՀԿ
- «Լուսաստղ» ՀԿ
- «ԱՌՄ» ԲՀԿ, և այլ հասարակական կազմակերպություններ:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի կողմից 2017 թվականին հատկացված դրամական աջակցություն

	Ընդհանուր նպաստ		Ընտանեկան նպաստ		Սոցիալական նպաստ		Հրատապ օգնություն		Ավանդ		Երեխայի խնամքի նպաստ (18000)		Երեխայի ծննդ. ՄԴՕ (50000)		1-ին դասարան հաճախելու ՄԴՕ (25000)		Ընտանիքի անդամի մահվան ՄԴՕ (50000)	
	Ընտ	Գումար	Ընտ	Գումար	Ընտ	Գումար	Ընտ	Գումար	Ընտ	Գումար	Ընտ	Գու-մար	Ընտ	Գումար	Ընտ	Գումար	Ընտ	Գումար
Հունվար	6806	180501000	4632	140487000	2174	40014000	324	5904000	3	583838	0	0	17	850000	0	0	2	100000
Փետրվար	6811	180081000	4608	139203000	2203	40878000	324	5850000	7	1540072	0	0	21	1050000	0	0	1	50000
Մարտ	6798	179467000	4590	138895000	2208	40572000	326	6048000	7	1763652	0	0	12	600000	0	0	1	50000
Ապրիլ	6742	177765500	4535	137211500	2207	40554000	333	5994000	17	3640046	0	0	25	1250000	0	0	1	50000
Մայիս	6764	179029500	4551	138439500	2213	40590000	329	5976000	11	2261862	0	0	11	550000	0	0	0	0
Հունիս	6703	177267500	4481	136425500	2222	40842000	318	5760000	13	3160439	0	0	26	1300000	0	0	1	50000
Հուլիս	6584	173367000	4373	132867000	2211	40500000	328	5904000	3	773744	0	0	16	800000	0	0	0	0
Օգոստոս	6653	178892000	4417	137672000	2236	41220000	329	6048000	7	1685232	0	0	13	650000	0	0	0	0
Սեպտեմբեր	6140	163187500	4079	125261500	2061	37926000	325	5922000	7	974948	0	0	35	1750000	199	4975000	1	50000
Հոկտեմբեր	6116	162184000	4043	124294000	2073	37890000	337	6066000	11	2148507	0	0	21	1050000	343	8575000	1	50000
Նոյեմբեր	6082	160639000	4007	122767000	2075	37872000	333	6030000	7	1788524	0	0	25	1250000	26	650000	2	100000
Դեկտեմբեր	6104	162039000	4039	124351000	2065	37688000	323	5832000	11	2280820	0	0	14	700000	0	0	1	5000
Ընդամենը		2074420000		1597874000		476546000		71334000	104	22601684		0	236	11800000	568	14200000	11	505000

16.ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Կարևորելով Մարդու իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները, և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանաձորում շուրջ քսան տարի գործում է Մարդու իրավունքների հայկական դպրոցը (ՄԻՀԴ), որն իր գործունեության ընթացքում ճանաչում է ձեռք բերել ԱՊՀ տարածաշրջանում և աշխարհում, իրատեսական է դարձնում այն տեսլականը, որ ՄԻՀԴ-ի նոր շենքի կառուցումով Վանաձոր քաղաքում կձևավորվի ժամանակակից կրթական պահանջները բավարարող միջազգային ուսումնական կենտրոն, որտեղ կրթություն կստանան առավելապես ուսանողները: Վանաձորում նման կրթական հաստատության առկայությամբ քաղաքացիների շրջանում կբարձրանա իրավական իրազեկության մակարդակը, ինչն էլ ժողովրդավարության կայացման հիմնասյուներից է:

Այդ նպատակով.

- Վանաձորի համայնքապետարանը հավաստում իր շարունակական աջակցությունը մարդու իրավունքների դպրոցի նոր շենքի կառուցման ծրագրին:
- Վանաձորի համայնքապետարանը և Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը, սերտ համագործակցելով, նպատակային աշխատանքներ կիրականացնեն միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ մարդու իրավունքների դպրոցի շենքի կառուցման համար ֆինանսական միջոցների ապահովման ուղղությամբ:

17. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ /ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ/)

Քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմինը /հանձնաժողովը/ գործում է ՀՀ քաղաքացիական օրեսգրքի, ՀՀ ընտանեկան օրենսգրքի, խնամակալության և հոգաբարձության /ԽՀ/ մարմինների կանոնադրության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.09.2011թ. «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը» հաստատելու մասին» թիվ 69-Ա/1 հրամանի, այլ իրավական ակտերի պահանջներին և երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների պետական քաղաքականությանը համապատասխան:

ԽՀ մարմնի գործունեության նպատակն է նպաստել՝

- երեխաների բնականոն, բարեկեցիկ կյանքի զարգացմանը,
- անչափահասների շրջանում անցանկալի երևույթների կանխմանը,
- ազգային և համամարդկային արժեքներ կրող անձի ներդաշնակ ձևավորմանը:

ԽՀ մարմնի հիմնական խնդիրներն են ապահովել երեխաների, ինչպես նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքը, կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում առանց ծնողական

խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, նաև օրենքով նախատեսված այլ խնդիրների կատարումը:

Բացահայտել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այն չափահաս անձանց, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքեր, համայնքում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացածության, համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերը, կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին:

Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառույթները, մասնավորապես՝

- սկզբնական հաշվառման վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին
- անց կացնել երեխայի և այն անձի /անձանց/ կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը
- օրենքով սահմանված այլ գործառույթներ:

ԽՀ հանձնաժողովը իրականացնում է նաև այլ գործառույթներ.

- Համագործակցություն մարզի այլ խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ, մասնագիտական փորձի փոխանակում, համատեղ նիստերի կազմակերպում
- Հայ երգի, պարի, երաժշտության համաքաղաքային մանկապատանեկան 27-ամյա փառատոնի կազմակերպում
- Հայ պոեզիայի և ասմունքի համաքաղաքային մանկապատանեկան 24-ամյա փառատոնի կազմակերպում
- Մուրացկանությամբ և թափառակաշրջիկությամբ զբաղվող, օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների հայտնաբերման և երևույթի կանխարգելմանն ուղղված կլոր սեղանի կազմակերպում հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ
- Տարվա ընթացքում առնվազն երկու անգամ կատարել տնայց խնամակալություն և հոգաբարձություն սահմանված, ինչպես նաև խնամատար ընտանիքներ /կատարել տնայցեր նաև ըստ անհրաժեշտության
- Այլ կառույցների հետ համատեղ ստուգայցեր քաղաքի բանուկ վայրերում:

18. ԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏ

- Համայնքի բնակիչների հետ հարաբերություններում կարևորել տեղական ինքնակառավարման մարմինների դերը՝ պահպանելով քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ օրենքով սահմանված իրավունքները:
- Վարչարարությունն իրականացնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված վարչարարության սկզբունքներին և

պահանջներին համահունչ, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ ընդունելով իրավաչափ վարչական ակտեր:

- Համայնքապետարան մուտքագրված յուրաքանչյուր դիմումի և բողոքի հիման վրա, ինչպես նաև աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների նախաձեռնությամբ կազմված փաստաթղթերի հիման վրա հարուցել վարչական վարույթ, որոնց շրջանակներում՝ կողմերի պարտադիր մասնակցությամբ իրականացնել լսումներ և համայնքի ղեկավարին ներկայացնել իրավաչափ վարչական ակտերի նախագծեր:
- Տեղական ինքնակառավարման մարմնի՝ համայնքի ղեկավարի կողմից քննվող վարչական իրավախախտումների գործերի քննությունը իրականացնել զանցանք կատարողի մասնակցությամբ՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:
- Կազմակերպել սեմինարներ համայնքի բնակիչների համար՝ հարկերի, տեղական տուրքերի և վճարների գանձմանն առընչվող, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությանն իրազեկելու թեմաներով:
- Կազմակերպել տեղական ինքնակառավարման մարմինների օրենսդրական դաշտում փորձի փոխանակում՝ հաշվի առնելով միջազգային փորձը:

19.ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վանաձոր քաղաքի տարածքը գտնվում է խիստ ակտիվ և սեյսմիկ տեսակետից վտանգավոր Սպիտակ-Փամբակ խզվածքի ազդեցության գոտում, բացի դրանից քաղաքի տարածքը հատվում է մի քանի խզվածքներով, որոնք էլ ավելի են մեծացնում սեյսմիկ վտանգը:

Բնական վտանգավոր երևույթներից Վանաձոր քաղաքի տարածքին առավել բնորոշ են հորդառատ անձրևները, հեղեղումների, սելավների և քարաթափումների տեղամասերը, ուժեղ քամիներն ու կարկտահարությունները:

Գոյություն ունի աղետների ռիսկի գնահատման միջազգայնորեն ընդունված բանաձև

Վտանգ x խոցելիություն x հնարավոր կորուստներ	**= Աղետների ռիսկ**
Աղետներին դիմակայելու կարողություն	

Բանաձևը աղետների ռիսկի որակական նկարագիրն է և չի կարող օգտագործվել հաշվարկներ կատարելու համար:

Միջազգային փորձը ցույց է տվել, որ միջոցների և կարողությունների կենտրոնացումը ազգային մակարդակում, աղետների ռիսկի նվազեցման և դրանց արձագանքելու համար ոչ հստակ իրավասություններն ու պարտականությունները տեղական մակարդակում, ինչպես նաև հարկաբյուջետային, մարդկային և մասնագիտական ռեսուրսների անբավարար մակարդակը տեղական կառավարման ոլորտում մեծապես բարձրացնում են աղետների ռիսկի աստիճանը:

Եթե հաշվի առնենք Վանաձոր քաղաքի տեղանքի սեյսմիկ նկարագիրը, ապա Վանաձորի համար շատ մեծ ռիսկային թիրախ են հանդիսանում ամրացման ենթակա բնակելի շենքերը, որոնցում մարդիկ են ապրում:

Քաղաքի զարգացման բնականոն ընթացքը ապահովելու համար անհրաժեշտ է, որ աղետներին դիմակայելու կարողությունը մեծացնելու և աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներն անհրաժեշտաբար ընդգրկվեն քաղաքի զարգացման ծրագրում:

Աղետների ռիսկերի կառավարման պլանը ըստ հավելված 2-ի:

20. ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Բնակչության բարեկեցության բարելավման համար տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ջանքեր չխնայեն Վանաձոր քաղաքը ներդրողների համար հրապուրիչ դարձնելու և պատշաճ մակարդակով այն ներկայացնելու գործում: Համապետական ներդրումային և բիզնես միջավայրի զարգացմանն ուղղված քաղաքականությանը համահունչ՝ պետք է մշակվեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր: Անհրաժեշտ է մշակել համայնքի զարգացման բիզնես ծրագիրը, որը կներառի գործարարության զարգացման հնարավոր ուղղությունների վերաբերյալ կոնկրետ ծրագրեր: Նախատեսվում է ուսումնասիրել և քարտեզագրել համայնքի տնտեսական ներուժը, ի հայտ բերել խնդիրները և մշակել դրանց լուծման ուղիները, կազմել համայնքի գերակա ոլորտների զարգացման ծրագրեր և այդ ծրագրերը ներկայացնել պետական կառույցներին, ներդրողներին, գործարարներին: Մեծ ջանքեր են գործադրվելու զբոսաշրջության, սպորտի ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ:

Համայնքի գործարար միջավայրի զարգացմանը միտված ծրագրերը բերված են հավելվածում:

21. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանք փնտրողների թիվը **Լոռու** մարզում կազմում է շուրջ 11.2 հազար, Վանաձորում՝ 5.676 հազար: Գործազուրկների թվաքանակը մարզում կազմում է աշխատանք փնտրողների 96.1%-ը կամ 10.7 հազար մարդ, Վանաձորում՝ 97.9%, կամ 5.558 հազար մարդ: Շարունակում է բարձր մնալ գործազուրկ կանանց թիվը, որը մարզում կազմում է գործազուրկների թվի 70.5%-ը, կամ 7.6 հազ. մարդ, Վանաձորում՝ 69.35%-ը կամ 3.854 հազար մարդ: Լոռու մարզում գործազուրկի կարգավիճակ ունեցողների 25.0%-ը, կամ 2.7հազ-ը գյուղաբնակներ են, Վանաձորում՝ 14.8%, կամ 0.825 հազար մարդ, 1.8%-ը, կամ 188-ը հաշմանդամություն ունեցող անձինք, Վանաձորում՝ 1.4% կամ 78 անձիք:

2017թ. դրությամբ, գործազուրկների թիվը կազմում է 4139 մարդ:

Աշխատանք փնտրողների և գործազուրկների թվաքանակն ըստ Լոռու մարզի Զբաղվածության տարածքային կենտրոնների /հազ.մարդ/



Վանաձորի գործազուրկների համեմատական ցուցանիշները 01.01.2015թ., 01.01.2016թ., 01.12.2016թ.



Ըստ Լոռու մարզի Վանաձորի զբաղվածության կենտրոնի տրամադրած տվյալների:

Համայնքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունների՝ արդյունաբերական ձեռնարկությունների ցանկն ըստ հավելված 3-ի, հասարակական կազմակերպությունների ցանկն ըստ հավելված 4-ի:

22. ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Վանաձոր համայնքի գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման ոլորտի գործառույթներն են՝ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի հաշվառում, սեփական եկամուտների՝ գույքահարկի, հողի հարկի, գույքի և հողի, աղբահանության վարձավճարների հաշվառում, հավաքագրում: Ոլորտում իրականացվում են իրավաբանական, ֆիզիկական անձանց հասարակական-արտադրական և բնակելի նշանակության շենք-շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկերի հաշվարկման, հաշվառման, ծանուցագրերի բաժանման և հարկերի գանձման ու մուտքային գործառույթները: Նույն աշխատանքները և գործառույթները նույն խմբի հարկատուների նկատմամբ իրականացվում են և՛ հողի հարկի, և՛ աղբահանության վարձավճարների հավաքագրման գծով:

Համայնքի եկամտային մասով ըստ տեսակների ենթադրվում է հետևյալ մուտքերը.

Հարկային եկամուտներ

1. Հողի հարկ

Համայնքի տարածքում հաշվառված են հողի հարկի գծով հարկատու համարվող 312 իրավաբանական և 10.818 ֆիզիկական անձինք, որոնց մեկ տարվա հաշվարկային եկամուտը կազմում է 40.798.192 դրամ: Դրանցից շուրջ 571 հարկատու 2000թ.-ից մինչ օրս որևէ վճարում չի կատարել (այն սեփականատերերը, որոնք երկար տարիներ բացակայում են հանրապետությունից, կամ մահացած սեփականատերեր): Այդ հարկատուների տարեկան ընդհանուր հարկային պարտավորությունը կազմում է 1.315.800 դրամ: Իրավաբանական անձանցից 11 կազմակերպություններ սնանկ են, որոնց հարկային պարտավորությունը կազմում է 7.106.576 դրամ: Հաշվի առնելով այս ամենը, նպատակահարմար է հողի հարկի գծով 2018թ.-ի համար նախատեսել 33.575.000 դրամ եկամուտ:

2. Գույքահարկ

Գույքահարկի հաշվառումներով՝ գույքահարկի հարկային պարտավորություններ ունեն 581 իրավաբանական անձինք որոնց անշարժ գույքի և փոխադրամիջոցների 1 տարվա հարկային պարտավորությունը կազմում է 67.306.600 դրամ: Դրանցից 11 սնանկ կազմակերպությունների տարեկան հարկը կազմում է 13.185.680դրամ: Անշարժ գույքի հարկային պարտավորությունների գծով հաշվառված է 9909 ֆիզիկական անձ, որոնց գույքահարկի գծով 1 տարվա հարկային պարտավորությունը կազմում է 56.223.000 դրամ: Ֆիզիկական անձանց փոխադրամիջոցների գծով հաշվառված է 17.513 փոխադրամիջոց, որոնց 1 տարվա հարկային պարտավորությունը գույքահարկի գծով կազմում է 232.608. 983դրամ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ նպատակահարմար է գույքահարկի գծով 2018թ.-ի համար նախատեսել 398.450.000 դրամ եկամուտ:

Ոչ հարկային եկամուտներ, այդ թվում՝

ա/ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից,

բ/համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման վարձավճարներից:

Ներկայումս համայնքի տարածքում կա վարձակալությամբ տրված 78 անշարժ գույք, 3 աղբահանող մեքենա, որոնց տարեկան վարձավճարի ընդհանուր գումարը կազմում է 6.800.000 դրամ:

Վանաձոր համայնքի տարածքում վարձակալությամբ տրված են 150 հողատարածքներ խանութ-տաղավարների համար, 229 տարբեր նշանակության տարածքներ, որոնց տարեկան վարձավճարը կազմում է 32.850.000 դրամ:

2018թ.-ին նշված ուղղությամբ ակնկալվող եկամուտի գումարը կկազմի գույքի վարձակալության գծով՝ 3.720.000 դրամ, հողի վարձակալության գծով՝ 33.300.000 դրամ:

Աղբահանություն

Համայնքի տարածքում հաշվառված է շուրջ 105.000 բնակիչ, փաստացի՝ բնակվում է 85.000 բնակիչ:

Ըստ մանրակրկիտ ուսումնասիրության՝ համայնքի բնակիչ համարվող և աղբահանության վարձավճարների հաշվարկման բազայում ընդգրկված անձանց մասով պարզվել է, որ 20120 բնակելի տների և բնակարանների բնակիչներ 2015թ.-ի ընթացքում ամբողջ ընտանիքով՝ 60000 անձ, ամբողջ տարին բացակայել են իրենց բնակության վայրից ու չեն օգտվել աղբահանության ծառայությունից, և նշված անձանց մասով հաշվարկված վարձավճարները ևս ենթակա են վերահաշվարկման և զրոյացման: Բացի այդ, շուրջ 2500 անձ նույնպես ժամանակավորապես բացակայում են բնակության վայրից (տարբեր ընտանիքներից՝ մասնակի 1 կամ 2 անձ), որոնց վերաբերյալ դեռ չեն ներկայացվել հիմնավոր փաստաթղթեր, սակայն հետագայում ենթակա են վերահաշվարկման:

Աղբահանության գծով, ըստ վերը կատարված վերլուծությունների 2017թ.-ի ընթացքում համայնքի տարածքում մշտական կարող են ներկա գտնվել և աղբահանության ծառայությունից օգտվել ընդամենը 63835 բնակիչ (63835x200x12=153204000) և հաշվառված 1360 հասարակական սպասարկման գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների 1 ամսվա վարձավճարի թիվը կազմում է 3.100.000դրամ, տարեկանը՝ 3100000x12=37.200.000դրամ: Այսպիսով՝ աղբահանության վարձավճարների գծով ընդհանուր եկամուտը կարող է կազմել 190.404.000:

2018-2021թթ. համար եկամտատեսակների գրեթե բոլոր տեսակների գծով նախատեսվում է որոշակի աճ, քանի որ հարկատու ֆիզիկական անձինք այժմ հնաավորություն ունեն համայնքապետարանի կայքում տեսնել գույքահարկի և հողի հարկի իրենց պարտավորությունները, իսկ հետագայում նախատեսվում է ապահովել նաև առցանց վճարում:

Նկատի ունենալով, որ նոր շինությունները գրեթե չեն ավելանում, հների կադաստրային արժեքները նվազում են, անշարժ գույքի գույքահարկի գծով աճ կանխատեսել անիմաստ է, փոխարենը մեքենաների ներմուծման և հզորության ավելացման հաշվին փոխադրամիջոցների գույքահարկի գծով կանխատեսվում է որոշակի աճ:

2015-2018թթ. համեմատական աղյուսակ ըստ եկամտատեսակների, հազ. դրամ

եկամտատեսակ	2015		2016		2017		2018
	նախատեսված	փաստացի	նախատեսված	փաստացի	նախատեսված	փաստացի	նախատեսված
գույքահարկ	290000	340033	303210,0	340276	343710,0	363042	398575,0
հողի հարկ	37700	30434,5	37945,0	26809,5	27800,0	28101,3	33575,0

հողի վարձակալություն	31888,3	27247,5	32760,0	23866,4	29450,0	24625,6	33300,0
գույքի վարձակալություն	8108,0	13777,7	8300,0	10486,1	4800,0	9251,0	3720,0
աղբահանություն	146400	133479	192312	164651,7	194000,0	186475,1	206000,0



23. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի 2015-2017թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2018-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը, հազ, դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. նախատ.	2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2016թ. փաստ.	2017թ. նախատ.	2017թ. փաստ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	2287598,2	2326205,8	2498660,6	2393245,2	2433353,5	2280345,4	2644212,0	2660279,6	2703929,6	2750451,9
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	2187687,0	2200075,1	2398338,2	2286882,7	2359443,7	2153465,7	2345813,0	2413279,6	2449429,6	2489451,9
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	435583,0	452081,0	424669,0	449682,1	455676,3	480514,6	546795,0	563000,0	572600,0	583750,0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	142700,0	129735,9	139151,0	119753,4	133085,7	120778,5	143413,0	147500,0	150900,0	153950,0
	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	110000,0	99301,4	101206,0	92943,9	105285,7	92677,2	109838,0	113000,0	115300,0	117600,0
	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	32700,0	30434,5	37945,0	26809,5	27800,0	28101,3	33575,0	34500,0	35600,0	36350,0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	210000,0	240731,3	202004,0	247332,5	238424,3	267364,5	288612,0	299000,0	302000,0	307000,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	210000,0	240731,3	202004,0	247332,5	238424,3	267364,5	288612,0	299000,0	302000,0	307000,0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	57883,0	60549,7	61514,0	62925,6	62166,3	64951,5	91770,0	93000,0	95500,0	97800,0
	Տեղական տուրքեր	57883,0	60549,7	61514,0	62925,6	62166,3	64951,5	91770,0	93000,0	95500,0	97800,0

1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	25000,0	21064,1	22000,0	19670,6	22000,0	27420,1	23000,0	23500,0	24200,0	25000,0
	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	25000,0	21064,1	22000,0	19670,6	22000,0	27420,1	23000,0	23500,0	24200,0	25000,0
1.5	Այլ հարկային եկամուտներ										
	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ										
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ										
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	1474479,3	1484479,3	1655052,0	1560571,3	1592524,6	1368168,3	1338167,8	1378101,9	1399251,9	1417251,9
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ										
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ										

2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	1444998,3	1444998,3	1655052,0	1560571,3	1583016,0	1360036,5	1338167,8	1378101,9	1399251,9	1417251,9
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	1265267,3	1265267,3	1324034,9	1324034,9	1354959,2	1354959,2	1330965,9	1370900,0	1392050,0	1410050,0
բ)	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ	172529,1	172529,1	323815,2	227834,5	220854,9	0,0	0,0	0,0	0,0	0,0
գ)	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	7201,9	7201,9	7201,9	8701,9	7201,9	5077,3	7201,9	7201,9	7201,9	7201,9
դ)	Այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ										
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	29481,0	39481,0	0,0	0,0	9508,6	8131,8	0,0	0,0	0,0	0,0
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	29481,0	39481,0				-507,4				
բ)	Միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման					9508,6	8639,2				

	նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ										
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	277624,7	263514,8	318617,2	276629,3	311242,8	304782,8	460850,2	472177,7	477577,7	488450,0
3.1	Տոկոսներ										
3.2	Շահաբաժիններ										
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	39997,0	41025,2	41060,0	34352,5	34250,0	33876,6	37020,0	38100,0	39200,0	40300,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	31889,0	27247,5	32760,0	23866,4	29450,0	24625,6	33300,0	34300,0	35300,0	36200,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ										
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ										
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	8108,0	13777,7	8300,0	10486,1	4800,0	9251,0	3720,0	3800,0	3900,0	4100,0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	61169,6	61169,6	61460,2	61424,8	61362,8	61353,6	61362,7	61427,7	61627,7	62100,0

	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	61169,6	61169,6	61460,2	61424,8	61362,8	61353,6	61362,7	61427,7	61627,7	62100,0
3.5	Վարչական գանձումներ	162558,1	146893,8	203837,0	175123,8	203550,0	202313,7	351553,5	361300,0	364370,0	372650,0
	Տեղական վճարներ	160158,1	144958,8	201587,0	174748,8	201825,0	202023,7	349303,5	359000,0	362000,0	370000,0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	2400,0	1935,0	2250,0	375,0	1725,0	290,0	2250,0	2300,0	2370,0	2650,0
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	2000,0	1368,0	1500,0	131,3	2200,0	96,6	1300,0	1350,0	1380,0	1400,0
	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	2000,0	1368,0	1500,0	131,3	2200,0	96,6	1300,0	1350,0	1380,0	1400,0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող գծով տույժերից										
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ										

3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ										
3.9	Այլ եկամուտներ*	11900,0	13058,2	10760,0	5596,9	9880,0	7142,3	9614,0	10000,0	11000,0	12000,0
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր										
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	1604,9	177,7					56000,0			
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	11900,0	13058,2	10760,0	5596,9	9880,0	7142,3	9614,0	10000,0	11000,0	12000,0
II	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	79953,2	106172,7	43700,0	49740,1	47000,0	99969,9	216189,2	222000,0	224500,0	228000,0
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	79953,2	106172,7	43700,0	49740,1	47000,0	99969,9	216189,2	222000,0	224500,0	228000,0
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	65023,2	96923,7	29700,0	38666,7	33700,0	91370,1	201611,2	207000,0	209000,0	212000,0
	Շարժական գույքի իրացումից մուտքեր										
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	14930,0	9249,0	14000,0	11073,4	13300,0	8599,8	14578,0	15000,0	15500,0	16000,0
2.	Պաշարների իրացումից մուտքեր										
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր										
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր										

	Հողի իրացումից մուտքեր										
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր										
III	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	19958,0	19958,0	56622,4	56622,4	26909,8	26909,8	82209,8	25000,0	30000,0	33000,0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	19958,0	19958,0	56622,4	56622,4	26909,8	26909,8	82209,8	25000,0	30000,0	33000,0
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ										
1.1	Արժեթղթեր										
	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր										
	- հիմնական գումարի մարում										
1.2	Վարկեր										
	- վարկերի ստացում										
	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում										
1.3	Փոխատվություններ										
	- բյուջետային փոխատվությունների ստացում										
	- ստացված փոխատվությունների գումարի մարում										
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	19958,0	19958,0	56622,4	56622,4	26909,8	26909,8	82209,8	25000,0	30000,0	33000,0
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն										

2.2	Փոխատվություններ										
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	19958,0	19958,0	56622,4	56622,4	26909,8	26909,8	82209,8	25000,0	30000,0	33000,0
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս										
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս										
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում										
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը										
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ										
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ										
1.1	Արժեթղթեր										
	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր										
	- հիմնական գումարի մարում										
1.2	Վարկեր										
	- վարկերի ստացում										

	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում										
1.3	Փոխատվություններ										
	- բյուջետային փոխատվությունների ստացում										
	- ստացված փոխատվությունների գումարի մարում										

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

24.ՀԱՄԱՅՆՔԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Լոռու մարզկենտրոնն է, որտեղ տեղակայված է Լոռու մարզպետարանը • Վանաձորով է անցնում Մ6 միջպետական ճանապարհը • Առկա է մեծ և փոքր համայնքների հետ տրանսպորտային կապը • Գործում է երկաթգիծ, որը կապ է պահպանում Վրաստանի Հանրապետության հետ • Ունի զարգացած կրթական և մշակութային ենթակառուցվածքներ • Քաղաքում տեղակայված են ՀՀ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներ՝ հարկային տեսչությունը, մաքսային տեսչությունը, ԼՄ ընդհանուր իրավասության դատարանը, Լոռու մարզի դատախազությունը, ԱԻՆ Լոռու մարզային փրկարարական ծառայությունը, բնապահպանական տեսչությունը, անտառտնտեսությունը և այլն • Համայնքի մոտ 98%-ը գազաֆիկացված է • Առկա է ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ, գործում են մարզային 4 հեռուստաընկերություններ, ռադիոկայան • Գործում են եկեղեցիներ • Կան ռուսական, հունական, ուկրաինական համայնքային միավորումներ • Հարմար է լեռնային զբոսաշրջությունը զարգացնելու համար • Ունի հարմար լեռնագոգեր՝ լեռնադահուկային սպորտը զարգացնելու համար • Ունի խմելու ջրի, հանքային ջրի աղբյուրներ • Կարող է ծառայել որպես առողջարանային գոտի • Տեխնիկական մտավորականության ներուժ	• Ներհամայնքային ճանապարհների և մայթերի վատ վիճակ • Հեղեղատարների և անձրևաջրատարերի վթարային վիճակ • Աղբահանության անբավարար վիճակ • Տնակներում գործող նախադպրոցական ուսումնական 4 հաստատություններ • Բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակ • Աշխատատեղերի պակաս՝ գործազրկության բարձր մակարդակ • Արդյունաբերական հիմնարկների սնանկ վիճակ • Երկրաշարժային և սողանքային գոտի • Միգրացիայի բարձր մակարդակ • Ներդրումների պակաս • Բյուջեի դեֆիցիտ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	**ՎՏԱՆԳՆԵՐԸ**
• SS ոլորտի զարգացում • Տուրիզմի զարգացում • Լեռնային, էկոզբոսաշրջության զարգացում	• Սեյսմիկ ակտիվ գոտի • Թվով 84 վթարային շենքերի առկայություն

• Ճոպանուղու հիմնանորոգում և վերագործարկում • Լեռնադահուկային սպորտի զարգացում • Փոքր և միջին բիզնեի զարգացում • Մեծ աշխատուժի առկայություն • Համայնքի բյուջեի ֆինանսական կայունության հիման վրա փոխառու միջոցների ներգրավում	• բնակֆոնդի վիճակի վատթարացում • Կամուրջների վթարայնություն • Շրջակա միջավայրի աղտոտվածություն • Նախկին քիմկոմբինատի պոչամբարի առկայություն • Նախկին քիմկոմբինատի լուծարում • Սողանքների առկայություն • Տնտեսության անկայուն վիճակ • Համայնքի անհամաչափ զարգացում

25. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի զարգացման հեռանկարներն են՝

Վանաձորը դարձնել կանաչ, մաքուր, բարեկարգ, կրթական, մշակութային և ժամանցային զարգացած ենթակառուցվածքներով, առևտրի և սպասարկման, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ քաղաք:

26.ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքի արտաքին ձևավորում

- Քաղաքի կահավորման արդիականացում
- Գովազդային վահանակների համաչափության
- Քաղաքի մուտքերի/ելքերի արդիականացում
- Լանդշաֆտների ձևավորում ՝ կանաչապատման ընթացքում օգտագործելով դեկորատիվ տարրեր, ծաղկամաններ: Շենքերի ճակատային մասերի ձևավորում բուսականությամբ, կենտրոնական փողոցների շքամուտքերի ձևավորում
- Հանգստի գոտիների, զբոսայգիների ու պուրակների, բակային տարածքների բարեկարգում
- Կանաչ գոտիների և ծաղկապատ տարածքների վերականգնում
- Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ավելացման աշխատանքների իրականացում
- Ջրավազանների և շատրվանների բարեկարգում և վերականգնում:

Բիզնեսի զարգացում եվ համագործակցություն

- Հիմնվելով Վանաձոր քաղաքի աշխարհագրական դիրքի և առկա տնտեսական հզորությունների ներուժի վրա, նաև հաշվի առնելով, որ Վանաձորը Երևան-Թբիլիսի երկաթուղու կարևորագույն հանգուցային կայարաններից է՝ ջանքեր գործադրել Վանաձորը դարձնելու տարածաշրջանային, մասնավորապես՝ հայ-վրացական անդրսահմանային տնտեսական կենտրոն:
- Նպաստել քաղաքում թեթև արդյունաբերության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը: Մասնավորապես աջակցել կարի արտադրության, գյուղմթերքների վերամշակման, առևտրի սպասարկման, ծառայությունների մատուցման և բարձր տեխնոլոգիաների զարգացման ոլորտներին:
- Համագործակցել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ:
- Ստեղծել բարենպաստ պայմաններ մասնավոր ներդրողների համար, բարելավել ներդրումային միջավայրը:
- Մշակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր, ուսումնասիրել համայնքի տնտեսական ներուժը

- Զարգացնել ՏԻՄ- մասնավոր հատված համագործակցությունը
- Անմիջական կապ ստեղծել դոնոր կազմակերպությունների հետ, իրականացնել համատեղ ծրագրեր
- Կազմակերպել ֆորումներ և տոնավաճառներ
- Պահպանել քույր քաղաքների միջև առկա համագործակցության շարունակականությունը մշակույթի, տուրիզմի, տնտեսության, կրթության, առողջապահության և սպորտի բնագավառներում

Առողջ ապրելակերպ և սպորտ

- Քաղաքի տարբեր հատվածների, հատկապես ծայրամասային թաղամասերի, շենքերի բակերում հիմնել մարզական խաղահրապարակներ՝ համապատասխան մարզագույքով
- Մանուկների և երիտասարդների մոտ խթանել սերը դեպի սպորտը
- Նպաստել Վանաձորում պրոֆեսիոնալ սպորտի զարգացմանը
- Վերականգնել մարզադպրոցները, ձեռք բերել նոր գույք
- Վերականգնել և զարգացնել ավանդական մարզական մասսայական միջոցառումները,
- Վերականգնել քաղաքի երբեմնի ունեցած ֆուտբոլային ավանդույթներով լի համբավը
- Համագործակցել և աջակցել Վանաձորի առողջարանային համալիրի հետ՝ նպաստելով առողջարանային տուրիզմի զարգացմանը:

Շրջակա միջավայրի պահպանություն և կանաչ տարածքների ավելացում

- Մշակել քաղաքի կանաչ հատվածների ավելացման և պահպանման ծրագիր
- Նպաստել համայնքում այգիների բարեկարգմանը և նոր այգիների կառուցմանը
- Նպաստել քաղաքի հյուսիսային հատված անտառների վերականգմանը
- Նոր աղբաթափման վայրի գործարկում և շահագործում
- Մշակել ծրագրեր աղբի տեսակավորման և վերամշակման համար:

Ներհամայնքային տրանսպորտային ենթակառուցվածքներ

- Ներհամայնքային ճանապարհների ընթացիկ և կապիտալ վերանորոգում
- Հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի հաստատում
- Հասարակական տրանսպորտի տեխնիկական վիճակի բարելավում
- Հասարակական տրանսպորտի սպասարկման որակի բարձրացում, անձնակազմի վերաորակավորում
- Հասարակական տրանսպորտի կանգառների վերականգնում և վերանորոգում
- Հասարակական տրանսպորտի չվացուցակների համակարգի ներդնում և հրապարակում՝ կանգառներում ու www.vanadzor.am պաշտոնական կայքում
- Ավտոկայանատեղերի կարգավորում և նշագծում
- Երթևեկությունը կարգավորող լուսացուցային նոր համակարգի և նշանների տեղադրում
- Անվտանգության բարձրացմանը միտված միջոցառումների կազմակերպում

- Դիտարկել և ուսումնասիրել Վանաձորում ձիակառքի՝ որպես այլընտրանքային տրանսպորտային միջոցի, կազմակերպումը, նպատակ հետապնդելով այն դարձնել տուրիստական գրավչության տարր:

Մշակույթ և կրթություն

- Համայնքում գտնվող հուշարձանների և պատմամշակութային օբյեկտների շրջակայքի արդիականացում, գեղարվեստական լուսավորության ապահովում, եռալեզու տեղեկատվական հարթակների տեղադրում
- Մշակույթի տների, թանգարանների, ստեղծագործական կենտրոնների հիմնանորոգում և ջեռուցման ցանցի կառուցում, գույքի ձեռքբերում
- Ժամանակակից արվեստի կենտրոնի հիմնադրում
- Գեղարվեստի թանգարանի հիմնանորոգում
- Համաքաղաքային, ազգային ու պետական տոնական միջոցառումների կազմակերպում
- Մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծում, հին ավանդույթների վերականգնում
- Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանների բարելավում: Ուսումնական նոր մեթոդների ներդրում:

Զբոսաշրջություն

- Մայմեխ ճոպանուղու վերականգնում, ենթակառուցվածքների արդիականացում, լեռնադահուկային սպորտի զարգացում
- Վանաձորի կիրճի արդիականացում, էկո և վրանային զբոսաշրջության զարգացում
- «Վանաձոր» բրենդի ստեղծում
- Վանաձորի վերաբերյալ տեղեկատվական բուկլետների հրապարակում
- Վանաձորի քույր և գործընկեր քաղաքների հետ ճանաչողական այցերի կազմակերպում
- Զանգվածային լրատվամիջոցներում և համացանցում, Վանաձորը որպես զբոսաշրջային քաղաք, նյութերի պատրաստում ու ներկայացում
- Փառատոների կազմակերպում

Կառավարման տեխնոլոգիաներ

- Համագործակցել Վանաձորի Տեխնոլոգիական Կենտրոնի հետ, իրականացնել համատեղ ծրագրեր
- Համայնքի բանուկ փողոցներում, այգիներում պուրակներում տեղադրել տեսախցիկներ՝ քաղաքի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով
- Համայնքապետարանում առկա «Համայնքային կառավարման տեղեկատավական համակարգ» ծրագրի օգնությամբ ապահովել գույքահարկի և հողի հարկի

բազաների, ինչպես նաև համայնքապետարանի բյուջեի, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, իրադարձությունների, նորությունների հասանելիություն:

- Արդիականացնել vanadzor.am կայք էջը, ստեղծել կայքի եռալեզու տարբերակը, արդիականացնել հարց ու պատասխան բաժինը
- Ստեղծել Վանաձորի տուրիստական կայք
- Ստեղծել helpvanadzor եռալեզու կայքը, որտեղ կներկայացվեն Վանաձորի հիմնախնդիրները:
- Ես սիրում եմ Վանաձորը հիմնադրամի/կայքի ստեղծում:

27. 2018-2021թթ. ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵՎԱԾ 1. Տրանսպորտային կամուրջներ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Աղետների, ռիսկերի կառավարում

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Վանաձոր քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների տվյալներ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀԿ-եր, կուսակցություններ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ճարտարապետություն և քաղաքաշինություն /41 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 6. Մշակույթ /16 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 7. Կրթություն /21 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 8. Սպորտ /10 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 9. Կոմունալ /17 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 10. Համատիրություններ և բնակարանային տնտեսություն /8 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 11. Առևտուր և սպասարկում, տրանսպորտ /3 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 12. Տուրիզմի /7 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՏԻՄ կարողություններ /1 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 14. Առողջապահություն, սոցիալական ոլորտ /4 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 15. Էներգետիկա /3 ծրագիր/

ՀԱՎԵԼՎԱԾ 16. Ասիական զարգացման բանկին ներկայացվելիք ներդրումային ծրագրերի ցանկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ
ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն.ՄԱՄՈՒԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտի 2018 թվականի N 26-Ն

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Վանաձոր համայնքի 2018-2021 թվականների զարգացման ծրագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԿՈՂՄ (18)		**ԴԵՄ(5)**	**ՁԵՌՆՊԱՀ (1)**
Մ.Ասլանյան	Ա.Փելեշյան	Հ.Սիմիկյան	Հ.Այվազյան
Գ.Քալանթարյան	Կ.Դավթյան	Վ.Կռոյան	
Ա.Գրիգորյան	Է.Մովսիսյան	Ա.Կարապետյան	
Վ.Դոխոյան	Տ.Նազարյան	Ա.Եղիազարյան	
Խ.Վարդանյան	Դ.Հակոբյան	Ռ.Մարգարյան	
Հ.Մովսիսյան	Հ.Մարգարյան		
Մ.Հովհաննիսյան	Ս.Աղաբեկյան		
Ա.Ափինյան	Ս.Մելքոնյան		
Դ.Սիմոնյան	Ս.Ղամբարյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2018 թ. մարտի 29
ք.Վանաձոր